

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Չարբախ
3-րդ փողոց 31/13 հասցեում Արթուր Աբրահամի անվան
մանկապատանեկան մարզահամալիրի կառուցման

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



Պատվիրատու՝

ՀՀ Քաղաքաշինության կոմիտե

Նախագծային ընկերություն
«Օն Դիզայն» ՍՊԸ՝
Տնօրեն՝ Վ. Իսախրյան

ՇՄԱԳ իրականացնող
«ԳրինԹայմ» ՍՊԸ՝
Տնօրեն՝ Ա. Հարությունյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	5
2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	6
3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ.....	7
4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ.....	11
4.1 Նախատեսվող գործունեության բնութագիրը.....	11
4.2 Էներգախնայողությանն ու էներգաարդյունավետությանը ուղղված միջոցառումներ.....	14
4.3 Ջրամատակարարում և ջրահեռացում.....	15
4.4 Էլեկտրամատակարարում.....	15
4.5 Շինարարության կազմակերպում.....	16
4.4.1. Շինարարության կազմակերպման համառոտ նկարագիր.....	16
4.2.1. Հիմնական մեքենա-մեխանիզմներ ու շինարարական անձնակազմ.....	18
4.2.2. Հողային աշխատանքներ, օգտագործվող բնառեսուրսներ.....	19
5. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.....	23
5.1 Բնապահպանական պայմանների բնութագիրը.....	23
5.2 Բուսական և կենդանական աշխարհ.....	25
5.3 Պատմամշակութային հուշարձաններ.....	26
5.4 Հողօգտագործում, տարածքի բարեկարգում և կանաչապատում.....	26
5.5 Օդային ավազան.....	27
5.6 Ջրային ռեսուրսներ.....	29
5.7 Հողեր.....	29
6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՄՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	30
6.1 Սոցիալական գործոններ, ժողովրդագրական կազմ և բնակչություն.....	30
6.2 Բնապահպանական ազդեցություններ.....	30
7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ.....	34
8. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ.....	36
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	38

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ.....	39
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ.....	40
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ.....	42
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ.....	45
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐԻ ՀԱՐԿԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ.....	47
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.....	51
ՀԱՎԵԼՎԱԾ 7. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԽԵՄԱ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑ.....	54
ՀԱՎԵԼՎԱԾ 8. ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ.....	57
ՀԱՎԵԼՎԱԾ 9. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ (ԲԿՊ).....	58
ՀԱՎԵԼՎԱԾ 10. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ.....	63
ՀԱՎԵԼՎԱԾ 11. ԲՈՂՈՔԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎ.....	66
ՀԱՎԵԼՎԱԾ 12. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ.....	67

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՊՄ - անհատական պաշտպանական միջոցներ

ԲԱՄ - բողոքների արձագանքման մեխանիզմ

ԲԿՊ - բնապահպանական կառավարման պլան

ՀՀ - Հայաստանի Հանրապետություն

ՀՀՇՆ - Հայաստանի Հանրապետության շինարարության նորմեր

ՇՄԱԳ - շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում

ՇՄՆ - Շրջակա միջավայրի նախարարություն

ՇՄՄՏԿ - Շրջակա միջավայրի մոնիտորինգի և տեղեկատվության կենտրոն

ՊՈԱԿ - պետական ոչ առևտրային կազմակերպություն

ԶնԶ - ջրամատակարարում և ջրահեռացում

ՍՊԸ - սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՓԲԸ - փակ բաժնետիրական ընկերություն

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գործունեության նպատակ	Արթուր Աբրահամի անվան մանկապատանեական մարզահամալիրի կառուցում
Պատվիրատու	ՀՀ Քաղաքաշինության կոմիտե
Ձեռնարկող	«Օն Դիզայն» ՍՊԸ, հասցե՝ Արմավիր, ք. Մեծամոր 0910 /Շ/10/18 E-mail: ispiryan@ondesign.am
ՇՄԱԳ խորհրդատու կազմակերպություն	«ԳրինԹայմ» ՍՊԸ Հեռ.՝ (+ 374 93) 854 354 E-mail: greentime.arm@gmail.com
Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը	ք. Երևան, Շենգավիթ վարչական շրջան, Ներքին Չարբախ, 3-րդ փողոց 31/13
Կառուցապատման ենթակա հողատարածքի ընդհանուր մակերես	4482.13 մ ²

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվությունը մշակված է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Չարքախ 3-րդ փողոց 31/13 հասցեում Արթուր Աբրահամի անվան մանկապատանեական մարզահամալիրի կառուցման համար, որի նախաձեռնողը/պատվիրատուն հանդիսանում ՀՀ Քաղաքաշինության կոմիտեն: Նախատեսվող գործունեության նախագծային աշխատանքները կատարվել են «Օն Դիզայն» ՍՊԸ-ի կողմից:

Նախատեսվող գործունեության նախագծային փաստաթղթերը մշակվել են Երևանի քաղաքապետի կողմից 15.06.2022թ. տրված N 01/18-07/1-Դ-4490-515 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականով Հայաստանի Հանրապետությանը պատկանող հողամասի սահմաններում:

Նախագծի մշակման համար հիմք են հանդիսացել.

1. Անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N 31052023-01-0335 վկայականը,
2. N 01/18-07/1-Դ-4490-515 նախագծման թույլտվությունը՝ տրված 15.06.2022թ.,
3. 2024թ. «ԳԵՈԶՈՆ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող գործունեության տեղամասի համար իրականացված ինժեներաերկրաբանական և երկրաֆիզիկական հետազոտություններն ու համապատասխան եզրակացությունները,
4. ՀՀ ում գործող օրենքներն ու նորմատիվատեխնիկական փաստաթղթերը,
5. Պատվիրատուի առաջադրանքը՝ պայմանավորված համապատասխան հատակագծային ու ծավալատարածական լուծումներով:

Նախատեսվող տվյալ գործունեության իրականացումը ենթադրում է բնապահպանական ազդեցության գնահատման իրականացում՝ համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների: Նախատեսվող գործունեության աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 2014թ. հունիսի 21-ի ՀՕ 110-Ն (Փոփոխությունները 2023թ. մայիսի 3) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-ի «ա» ենթակետի համաձայն, Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Չարքախ 3-րդ փողոց 31/13 հասցեում նախատեսված Արթուր Աբրահամի անվան մարզահամալիրի կառուցման նախագծային փաստաթղթերը ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող բնապահպանական ազդեցությունները (շրջակա միջավայրը աղտոտող փաստակար նյութեր, թափոններ և այլ գործոններ), վերլուծել ու գնահատել դրանք, ցույց տալ, որ հնարավոր բացասական ազդեցությունների կանխարգելման, չեզոքացման և/կամ նվազեցման համար նախատեսված են անհրաժեշտ միջոցառումները: Գնահատման նպատակն է նաև նույնականացնել հնարավոր սոցիալական ազդեցությունները և օգուտները:

Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվությունն իրականացվել է ՀՀ օրենսդրության, մեթոդական և կարգավորող ընթացակարգերի պահանջներին համապատասխան, որում օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը և դրա իրականացման համար հիմք հանդիսացող փաստաթղթերը,
- նախատեսվող գործունեության տարածք դաշտային այցերի ընթացքում հավաքագրված տվյալներն ու տեղեկատվությունը,
- տվյալ տարածքի վերաբերյալ վերլուծությունները, քարտեզները, լուսանկարները:

Գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության փուլում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- աշխատանքային նախագծի հիման վրա նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության մշակում,
- շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկումների անցկացում,
- բնապահպանական փորձաքննության նպատակով նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության ներկայացում (ներառյալ՝ հանրային լուսնների արձանագրությունն ու մասնակիցների ցանկը) Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ:

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, իրավական այլ ակտերից և կառավարության մի շարք որոշումներից:

ՀՀ Սահմանադրության (2015) 12-րդ հոդվածը «Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը» սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների ողջամիտ օգտագործման վերաբերյալ՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

Ստորև ներկայացված են շրջակա միջավայրի պահպանության հարցերին առնչվող ՀՀ մի շարք օրենքներ և կառավարության որոշումներ.

➤ ՀՀ օրենքներ

- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք 21.06.2014թ. ՀՕ 110-Ն (Փոփոխությունները 2023թ. մայիսի 3) - բաղկացած է ՀՀ-ում տարբեր բնույթի ծրագրերի և գործունեությունների համար ՇՄԱԳ-ի գործընթացի հիմնական քայլերից: Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Օրենքի 12-րդ հոդվածով սահմանվում են շրջակա միջավայրի վրա ազդեցության և շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների, որոնք դասակարգվում են կատեգորիայի՝ «Ա», և «Բ», ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի:
- «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998)
- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999)
- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000)
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (1994թ.) - կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության, իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը, մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման

նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

- «ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:
- «ՀՀ Ջրային օրենսգիրք» (2002)
- «Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004) - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: ՀՀ Կառավարության 121-Ն որոշմամբ (ՀՀ-ում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին Կառավարության որոշում, 30.01.2003) սահմանվում են վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման պայմանները և կարգավորվում են դրա հետ կապված հարաբերությունները:
- «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենք (2011) - կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունները, սահմանում աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացի կազմակերպման սկզբունքները, աղբահանության վճարը, դրույքաչափերը, վճարողների շրջանակը, նրանց իրավունքներն ու պարտականությունները, վճարման կարգը, պատասխանատվությունը չվճարելու, պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման կարգը աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման բնագավառներում:
- «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:
- «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենք

- «ՀՀ անտառային օրենսգիրք» (2005)
- «ՀՀ Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենք (2006)
- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (2006)
- «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

➤ **ՀՀ կառավարության որոշումներ**

- ՀՀ կառավարության 29.01.2010թ. N72-Ն որոշում «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 29.01.2010թ. N71-Ն որոշում «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 14.08.2008 թ. N 967-Ն որոշում «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 02.11.2017 թ. N 1404-Ն որոշում «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 20.07.2006.N 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»
- ՀՀ կառավարության 31.07.2014թ. N781-Ն որոշում «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին»
- ՀՀ կառավարության 08.02.2018 թ. N108-ն N781-Ն որոշում «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2008 թ. հոկտեմբերի 30-ի N 1318-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»:

Սույն հաշվետվության պատրաստման ընթացքում հաշվի են առնվել նաև ՀՀ կառավարության 25.09.2014թ. «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա, և կառավարության 10.12.2015թ. նիստի «Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N54 կառավարության որոշումները, ներառյալ՝ ՀՀ կողմից վավերացրած բնապահպանական միջազգային պայմանագրերի պահանջները:

Հայաստանը վավերացրել է մի շարք միջազգային համաձայնագրեր (բերված են ստորև) և կոնվենցիաներ՝ կապված շրջակա միջավայրի կառավարման խնդիրների հետ (ցանկն առկա է ՀՀ ՇՄՆ <http://www.env.am/> ինտերնետային էջում)։

➤ **Միջազգային համաձայնագրեր.**

- «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիա (Բեռն)
- «Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթոշունների բնակավայր» կոնվենցիա (Ռամսար.)
- «Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին» կոնվենցիա (Բոնն)
- «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիա (CITES) (Վաշինգտոն)
- Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենցիա)
- «Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին» կոնվենցիա (Փարիզ.)
- ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք)
- «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո-դե-ժանեյրո)
- «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» կոնվենցիա (Ստոկհոլմ) (2003թ.վավերացվել է ՀՀ կառավարության կողմից)
- «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիա (Բազել)։

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռուժների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար։

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14, 15, 16, Գլուխ 6)։

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառվումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀՇՆ 10-01-2014 “Շինարարությունում նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին” N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014)։

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից։

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակը (2013) պարունակում է ՀՀ-

ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

4.1 Նախատեսվող գործունեության բնութագիրը

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ն.Չարբախ 3-րդ փողոց 31/13 հասցեում:

Հողամասի մակերեսը կազմում 4482.13 մ² (0.374813հա+0.0312հա+0.0422հա)՝ համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N31052023-01-0335 վկայականի: Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը բերված է [հավելված 1-ում](#):

Վերջինիս համաձայն ստորև ներկայացվում են տարածքի հետ կապված որոշ տվյալներ, մասնավորապես.

- հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի,
- գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ խառը կառուցապատման, այլ հողեր
- գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նախագծման համար հիմք են հանդիսացել պատվիրատուի/կառուցապատողի կողմից ներկայացված նախագծային առաջադրանքը և Երևանի քաղաքապետարանի կողմից 15.06.2022թ. տրված N 01/18-07/1-Դ-4490-515 նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանքը), որը բերված է [հավելված 2-ում](#):

Սույն գործունեությամբ նախատեսվում է կառուցել մանկապատանեական մարզահամալիր, որի նախագծման համար հիմք են հանդիսացել կառուցապատողի հայտը, անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականը և իր հատակագծային ու ծավալատարածական լուծմամբ պայմանավորված ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի կողմից տրված առաջադրանքը:

Նախատեսվող գործունեության նախագծային լուծումները հիմնվել են ՀՀ քաղաքաշինական և նորմատիվ փաստաթղթերի, ՀՀ գործող շինարարական նորմերի վրա, մասնավորապես.

- ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում»,
- ՀՀՇՆ 31-03-2018 «Հասարակական շենքեր և շինություններ» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թ. հոկտեմբերի 1-ի N82 հրամանում փոփոխություն կատարելու մասին:
- ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն»
- ՀՀՇՆ 20.04 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն»
- ՀՀՇՆ II-0.00-2006 «Հակահրդեհային անվտանգություն. նախագծման նորմեր»
- ՀՀՇՆ VI 13.102-99 «Բետոնյա և երկաթբետոնյան կոնստրուկցիաներ»
- СНиП 2.01.07-85 «Բեռնվածքներ և ազդեցություններ»

- СНиП 2.03.11-85 «Շինարարական կոնստուկցիաների պաշտպանություն կորոզիայից»
- СНиП 12-01-2004 «Շինարարության կազմակերպում»
- ՄՆ 245-71. Արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման սանիտարական նորմեր
- Այլ նորմեր և կարգավորումներ:

Նախատեսվող գործունեության տարածքը ապահովված է տրանսպորտային մոտեցումներով Ներքին Չարբախ 3-րդ, 7-րդ և 2-րդ փողոցներից:

Գործունեության տարածքը նախկինում մասամբ արդեն բարեկարգվել է բոնցքամարտիկ Արթուր Աբրահամի ջանքերով, որի մանրամասները ներկայացված են ստորև բերված աղյուսակ 1-ում և բաժին 5.4-ում: Մարգահամալիրի շենքը նախատեսվում է տեղակայել բարեկարգումից ազատ տարածքում, իսկ այն հատվածները, որոնց փաստումը շինարարության ժամանակ կլինի անխուսափելի շինարարության ավարտին նորից կբարեկարգվեն:

Մարգահամալիրի կառուցման համար ընտրված է երկաթ-բետոնե մոնոլիտ ծածկերով կարկասային համակարգ՝ բաց երանգի տրավերտինի, տուֆի և բազալտի արտաքին երեսպատմամբ:

Մարգահամալիրի շենքը բաղկացած է լինելու 1 ստորգետնյա և 3 վերգետնյա հարկերից բաղկացած 2 մասնաշենքերից:

Ստորգետնյա հարկի բարձրությունը 3.6մ է, վերգետնյա 1-ին հարկի բարձրությունը՝ 4.8մ, 2-րդ և 3-րդ հարկերն ունեն 5.40 մ բարձրություններ: Ստորգետնյա հարկում նախատեսված են ավտոկայանատեղիներ՝ 39 մեքենայի համար, որոնցից 4-ը նախատեսված է սահմանափակ շարժունակությամբ անձանց համար: Այն հանդիսանում է երկակի նշանակությամբ ավտոկայանատեղի, որն անհրաժեշտության դեպքում կարող է ծառայել որպես պարգագույն թաքստոց՝ 250-300 մարդու համար: Այս հարկում նախատեսված են 3 սանհանգույցներ, որոնցից մեկը՝ սահմանափակ կարողությամբ անձանց համար: Ստորգետնյա հարկն ապահովված է օդափոխությամբ և վթարային լուսավորությամբ: Դեպի ստորգետնյա հարկ մուտքն ու ելքը կազմակերպված է Ն. Չարբախ 3-րդ փողոցից:

➤ Առաջին մասնաշենք

Առաջին մասնաշենքի առաջին հարկում տեղակայված են լինելու ընդհանուր մարզման մարզասրահներն՝ իրենց հանդերձարաններով, նախատեսված կանանց և տղամարդկանց համար: Մարզասրահների թողունակությունը կազմում է համապատասխանաբար կանացի 20 մարդ/ժամ և տղամարդկանց 20 մարդ/ժամ: Այս մասնաշենքում են լինելու նաև ադմինիստրատիվ սենքերը, բժշկի կաբինետն իր սպասարահով, ընդհանուր օգտագործման սանհանգույցներ, սպասարահ՝

արտահագուստի հանդերձարանով: Երկրորդ հարկում տեղակայված են լինելու ադմինիստրատիվ գրասենյակներ, ինչպես նաև ըմբշամարտի մարզասրահը՝ 40մարդ/ժամ թողունակությամբ, կանացի և տղամարդկանց հանդերձարաններով, մերսման սրահներով և շոգեբաղնիքով: Երրորդ հարկում ևս առկա են ադմինիստրատիվ գրասենյակներ, ինչպես նաև այստեղ է տեղակայված բոքսի մարզասրահը՝ 20 մարդ/ժամ թողունակությամբ, կանացի և տղարդկանց հանդերձարաններով, մերսման սրահներով և շոգեբաղնիքով:

➤ **Երկրորդ մասնաշենք**

Երկրորդ մասնաշենքում տեղակայված է լինելու բասկետբոլի դահլիճը՝ 174 նստատեղով: Բասկետբոլի սպասասրահի վերևում նախատեսված է անտրեսոլային հարկ՝ երդիկային լույսերով, որտեղ տեղակայված է բուֆետ-սրճարանը: Վերջինս կարող է ծառայել մարզիկների համար՝ որպես ճաշարան, իսկ հանդիսատեսի համար՝ որպես սրճարան, հնարավորություն տալով վերնից դիտելու բասկետբոլային խաղերը:

Մասնաշենքերի առաջին (գրոյական) հարկում տեղակայված մարզադահլիճների համար կազմակերպված են 3 չծխացող աստիճանավանդակներ, որոնցից երկուսը ապահովված են վերելակներով: Աստիճանավանդակները նկուղային հարկում, ինչպես նաև առաջին հարկից առանձնացված են հակահրդեհային ինքնափակվող դռներով և հրակայուն ապակիներով:

Մարզասրահների, ինչպես նաև բոլոր սենքերի դռները և լուսամուտները նախատեսվում է իրականացնել այլումինե պրոֆիլներով:

Բոլոր հարկերում ընդհանուր միջանցքն աստիճանավանդակից առանձնացված է հակահրդեհային ինքնափակվող դռներով: Աստիճանավանդակների ապակեպատումը նախատեսվում է իրականացնել հրակայուն EIW-30 տիպի ապակիներով:

Առանց վերելակի աստիճանավանդակի արտաքին պատերի փոխարեն նախատեսվում է տեղադրել մետաղաշար՝ երեք հարկի բարձրությամբ, մետաղական դռով ապահովվելով ֆունկցիոնալ բացօդյա ծխահեռացումը և արտաքին դիզայնը: Բոլոր հարկերի աստիճանահարթակներում տեղադրվելու են ելք մակագրությամբ վթարային լուսավորության սարքեր:

Մարզահամալիրի տանիքը իրականացվելու է հարթ՝ ներքին ջրահեռացմամբ, իսկ դահլիճների ծածկի իրագործման համար կօգտագործվեն մետաղական ֆերմաներ:

Նախատեսվող մարզահամալիրի շենքը մոտակա բնակելի շինություններից գտնվում է նվազագույնը 11.7 մ հեռավորության վրա, որն իրենից ներկայացնում է 2 հարկանի քարե բնակելի տուն:

Տարածքի իրադրության սխեման՝ համապատասխան հեռավորությունների նշմամբ, ինչպես նաև տարածքի շրջադարձային կոորդինատները (WGS-84 կոորդինատային համակարգով) բերված են [հավելված 3](#)-ում:

Մարզահամալիրին կից նախատեսվում է կառուցել կաթսայատուն, որն հատակագծում ունի 5.5մ x 7մ առանցքային չափեր: Արտաքին պատերը նախատեսվում են իրականացվել ամրանավորմամբ, իսկ պատերը ջերմամեկուսացնել:

ՀՀՇՆ IV-11.07.01.2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերի պահանջներով նախատեսվել են թեքահարթակներ: Մարզահամալիրն ապահովված է լինելու թեքահարթակներով, հրդեհային ազդարարման ավտոմատ համակարգերով, էվակուացիոն ուղիներով և ելքերով և այլն:

Նախատեսվող գործունեության վերաբերյալ որոշ ընդհանուր ցուցանիշներ բերված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Նախատեսվող գործունեության վերաբերյալ ընդհանուր ցուցանիշներ

ՑՈՒՑԱՆԻՇ	ՄԻԱՎՈՐ	ԾԱՎԱԼ
Ընդհանուր ցուցանիշներ		
Տարածքի ընդհանուր մակերես	մ² (%)	4482.13 (100%)
առկա խաղահրապարակների ընդհանուր մակերես	մ ² (%)	301.66 (6.73%)
առկա խաղահրապարակի ճեմուղի	մ ² (%)	494.33 (11.03%)
առկա փողոց	մ ² (%)	294.47 (6.57%)
առկա կանաչապատ տարածքի մակերես	մ ² (%)	681.98(15.22%)
մարզահամալիրի շենքի կառուցապատման մակերես	մ ² (%)	2061.67 (46%)
մարզահամալիրի շենքի սալվածքի մակերես	մ ² (%)	540.46 (12.06%)
կաթսայատան շենքի մակերես	մ ² (%)	48.72 (1.09%)
կաթսայատան սալվածքի մակերես	մ ² (%)	22.97 (0.51%)
կառուցվող մարզահամալիրի շենքի ավտոկայանատեղիի ճանապարհ	մ ² (%)	11.75 (0.26%)
նախատեսվող կանաչապատման մակերես	մ ² (%)	24.12 (0.53%)

Նախատեսվող գործունեության գլխավոր հատակագիծը բերված է [հավելված 4](#)-ում, իսկ հարկերի հատակագծերը՝ [հավելված 5](#)-ում:

4.2 Էներգախնայողությանն ու էներգաարդյունավետությանը ուղղված միջոցառումներ

Մարզահամալիրի էլեկտրամատակարարման լուծումներն իրականացվել է շինարարական հատակագծերի և ՀՀ գործող նորմատիվային փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Էներգաարդյունավետության տեսանկյունից նախատեսված են միջոցառումներ շենքի երեսապատման համակարգի, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհանների տեղադրման, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացման ուղղությամբ, մասնավորապես.

- բարձր արդյունավետության ջերմամեկուսիչների կիրառում խողովակաշարերի և օդատարների համար՝ ջերմային կորուստների նվազեցման նպատակով,
- արտաքին կոնստրուկցիաների և օդատարների ջերմամեկուսացում,

- ջերմային կորուստների նվազեցման նպատակով բարձր արդյունավետության ջերմամեկուսիչների /пеноплекс/ կիրառում,
- օդափոխության համակարգում բարձր արդյունավետությամբ ղեկավարվող ջերմափոխանակիչների կիրառում:

4.3 Ջրամատակարարում և ջրահեռացում

Երևան քաղաքի Շենավիթ վարչական շրջանի Ն.Չարբախ 3-րդ փողոց 31/13 հասցեում կառուցվող մարզահամալիրի շենքի ջրամատակարարման և ջրահեռացման նախագիծն իրականացվել է պատվիրատուի կողմից տրված նախագծման առաջարկների, «Վեոլիա-Ջուր» ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանի և ՀՀ գործող շինարարական նորմերի և կանոնների համաձայն, որում հաշվի են առնվել նաև շահագործման ընթացքում հրդեհանվտանգության պայմանները: Ջրամատակարարման և ջրահեռացման նախագծի համար հիմք են հանդիսացել նաև ճարտարապետաշինարարական գծագրերը, գլխավոր հատակագիծը և տարածքի ինժեներաերկրաբանական հետազոտությունների արդյունքները:

Ջրամատակարարումը կիրականացվի տարածքին կից՝ Ն.Չարբախ 3-րդ փողոցով 100մ տրամագծով քաղաքային ջրատարից, իսկ կոյուղին նախատեսվում է միացնել Ն.Չարբախ 3-րդ փողոցով անցնող 300մ տրամագծով կոյուղատարին:

«Վեոլիա-Ջուր» ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանը բերված է [հավելված 6](#)-ում:

Հրդեհաշիջումը նախատեսված է ՀՀՇՆ.40-01.02-2020 նորմերի և ՀՀ կառավարության 08.08.2019 1025-Ն որոշման թիվ 29 հավելվածի համաձայն: Հրդեհաշիջման համար պահանջվող ջրի էլքը հաշվարկվել է «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» ՀՀՇՆ.40-01.01-2014 նորմերով:

4.4 Էլեկտրամատակարարում

Մանկապատանեկան մարզահամալիրի շենքի էլեկտրամատակարարումը նախատեսվում է իրականացնել շինարարական հատակագծերի և ՀՀ գործող նորմատիվային փաստաթղթերի պահանջներին համապատասխան, որի հետ կապված մշակված են համապատասխան նախագծային լուծումները՝ իրականացված համապատասխան լիցենզավորում ունեցող կազմակերպության կողմից:

Էլեկտրամատակարարումը նախատեսվում է իրականացնել նոր կառուցվող 630կՎԱ հզորության ենթակայանից, որը տեղակայված է լինելու մարզահամալիրի ստորգետնյա ավտոկայանատեղիների համար նախատեսված հարկում: Էլեկտրական սնուցումը իրականացվելու է ԲԵ0031 ենթակայանի 6կՎ ԲՄ-ից՝ համաձայն ՀԷՑ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի (տես՝ [հավելված 6](#)):

Էլեկտրական էներգիայի հիմնական ընդունիչներն են հանդիսանում էլեկտրական լուսավորությունը, վարդակային ցանցը, օդափոխման սարքավորումները: Էլեկտրական ընդունիչները էլեկտրական ցանցին միացնելու համար նախատեսված են խրոցակային վարդակներ /անջատիչներ/ հողանցման կոնտակներով: Թաց պրոցեսների

տարածքներում էլեկտրական ընդունիչների միացման վարդակները ընդունված են հողանցման կոնտակտներով, պաշտպանության համապատասխան մակարդակով:

Էլեկտրական ցանցի բոլոր էլեկտրական վարդակները ստորաբաժանվում են հիմնականների ու լրացուցիչների: Հիմնական վարդակները տեղադրվելու են սենյակներում, պատերի վրա՝ գետնից 80սմ բարձրությամբ: Խմբային ցանցը նախատեսվում է երկջիլ մալուխից, որը թաքնված անցկացվելու է պատերի ակոսիկների միջով՝ ծեփի տակով, և կախովի առաստաղների վաքերի տակով:

Նախատեսված է ընդհանուր աշխատանքային լուսավորություն բոլոր սենյակներում ու միջանցքներում, ինչպես նաև շենքի մուտքերում ու ելքերում:

Լուսամփոփների տեսակներն ու կատարումը համապատասխանում է տարածքների նշանակության և միջավայրին: Աստիճանավանդակներում և միջանցքներում նախատեսված է աշխատանքային և տարհանման լուսավորություն:

4.5 Շինարարության կազմակերպում

4.4.1. Շինարարության կազմակերպման համառոտ նկարագիր

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունն իրականացվելու է ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում՝ վարձակալել դրանք:

Մինչ շինարարական աշխատանքներ սկսելը Կապալառուն պետք է ունենա անհրաժեշտ բոլոր համաձայնությունները, տրված ՏԻՄ-երի կողմից՝ կապված գոյություն ունեցող կոմունիկացիաների, էլեկտրագծերի և գազատարի հետ հատման, շինարարական աղբի տեղափոխման, գործող ավտոճանապարհների տարածքում շինաշխատանքների իրականացման վերաբերյալ և այլն:

Էլեկտրահաղորդիչ գծերի, խմելու ջրի խողովակաշարի կամ այլ կոմունիկացիաների հետ հատման հատվածներում շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն համապատասխան մարմինների ներկայացուցիչների ներկայությամբ և թույլատվությամբ:

Շինարարության նախապատրաստական փուլում իրականացվելու են հետևյալ աշխատանքները.

- շին. հրապարակի ժամանակավոր ցանկապատում,
- շին. հրապարակի տարածքում տեղեկատվական վահանակների տեղադրում,
- ժամանակավոր շինությունների տեղադրում,
- շին. նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում,
- հակահրդեհային գույքի տեղադրում,
- շին. մեքենաների լվացման կետի տեղադրում,
- շին. հրապարակի գիշերային լուսավորվածություն,
- ըստ անհրաժեշտության՝ կոմունիկացիաների վերատեղադրում և տեղափոխում, միացում գոյություն ունեցող կոմունիկացիաներին:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել լիցենզավորված շինարարական կազմակերպություններից:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել հետևյալ սխեմայով.

- շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Առաքումը կկազմակերպվի այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի շին. աշխատանքների անընդհատությունը:
- Հավաքովի ե/բ կոնստրուկցիաների էլեմենտների պատրաստման համար խորհուրդ է տրվում օգտագործել Երևան քաղաքի և նրա հարակից տարածքների շինարարական արդյունաբերության հզորությունները:
- Առանձին ամրանային ձողերը և կմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով կբերվեն անմիջապես շինարարական հրապարակ, որտեղ կիրականացվի դրանց տեղադրումն ու պահեստավորումը:
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:
- Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումն ու վերանորոգումը նախատեսվում է իրականացնել համապատասխան մասնագիտացված ավտոտեխսպասարկման կետերում:

Շինարարության ժամանակացույցը, ինչպես նաև շին. հրապարակի կազմակերպման սխեման բերված է [հավելված 7](#)-ում: Շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման վայրերը և այլն, կազմակերպվելու են բացառապես նախատեսվող գործունեության վարչական տարածքի սահմաններում:

Կառուցապատողը պետք է կազմակերպի ավազի, գաջի, խիճի, այլ սորուն նյութերի, հողային զանգվածների փակ տարածքներում պահեստավորումը կամ անթափանց թաղանթներով ծածկումը, ինչպես նաև կազմակերպի դրանց տեղափոխումը՝ փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով: Շենքերի և շինությունների կառուցման աշխատանքների ընթացքում կառուցապատողը պետք է կազմակերպի շենքերը և շինությունները շինարարությանը համապատասխան բարձրությամբ 180 գրամ/քմ խտությամբ ցանցով ծածկումը:

Շինարարական հրապարակի տարածքից բեռնատար մեքենաների ելքը դեպի փողոց մաքուր անվադողերով ապահովվելու համար կառուցապատողը պետք է կազմակերպի դրանց լվացումը շինարարական հրապարակի ելքի հատվածում՝ հատուկ մետաղական էստակադայի վրա:

Շինարարական տեխնիկայի մուտքը դեպի տարածք նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող ճանապարհով, իսկ շինարարության տարածքը սահմանազատել՝ ելնելով անվտանգության տեխնիկայի կանոններից:

Շինարարական աղբը շինհրապարակից պարբերաբար կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր՝ ծածկով ապահովված բեռնատարներով:

Կենցաղային աղբի կուտակման համար շին. հրապարակն ապահովված կլինի համապատասխան աղբամաններով: Կենցաղային աղբը, որի ընդհանուր քանակը շինարարության ողջ ընթացքում կանխատեսվում է մոտ 5տ, կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում կպահպանվեն ՀՀ կառավարության 2002 թ. ապրիլի 20-ի N 438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի պահանջները, համաձայն որի հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմին:

4.2.1. Հիմնական մեքենա-մեխանիզմներ ու շինարարական անձնակազմ

Շինարարության ընթացքում անհրաժեշտ հիմնական մեքենաների և մեխանիզմների ցանկը ներկայացված է աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. Տեխնիկական միջոցների անվանացանկ*

N	Մեքենա-մեխանիզմների անվանում	Մակնիշ/հզորություն	Քանակ, հատ
1.	Ավտոինքնաթափ	KAMA3	4
2.	Էքսկավատոր՝ հետ բահ	CAT	2
3.	Բուլդոզեր-ամբարձիչ	CAT	2
4.	Աշխատանքային կռունկ	SCM FO 23B	1
5.	Ավտոմոբիլային կռունկ	KC-5473	1
6.	Բեռնատար մեքենա՝ պտտվող թափքով	-	3
7.	Բետոնախտացնող սարք՝ խորքային	-	3
8.	Բետոնախտացնող սարք՝ մակերևութային	-	3
9.	Եռակցման ագրեգատ	CTH-550	4
10.	Պնևմատիկանիշ սարք	-	3
11.	Ավտոաշտարակ	-	3

* մեքենաների և մեխանիզմների կազմը տրված են խորհրդատվական կարգով և կարող են փոխարինվել նույն տեխնիկական պարամետրեր ունեցող այլ մեքենաներով ու մեխանիզմներով

Շինարարության նորմատիվ տնտղությունը որոշվել է հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրն ու շինարարության ընդհանուր ծավալը և ըստ օրացույցային ժամանակացույցի կազմում է 38 ամիս:

Շինարարական աշխատանքների իրականացման համար ներգրավված բանվորական ուժը հիմնականում պետք է լինի բարձր որակավորում ունեցող

մասնագետների բրիգադ: Ոչ մասնագիտական բանվորական ուժի կիրառումը պետք է հասցվի նվազագույնի: Շինարարության ընդհանուր ղեկավարությունը իրագործվելու է տեղամասի պետի և աշխղեկի կողմից:

Շինարարության ընթացքում պահանջվող աշխատողների թիվը գնահատվում է միջինը 77 մարդ, որից.

- ինժիներատեխնիկական անձնակազմ՝ 9 մարդ,
- բանվորներ՝ 68 մարդ (ներառյալ՝ սպասարկող անձնակազմը և օժանդակ տնտեսությունները):

4.2.2. Հողային աշխատանքներ, օգտագործվող բնառեսուրսներ

Հողային աշխատանքներ: Նախագծի հողային աշխատանքների հաշվարկն իրականացվել է համաձայն ներկայացված երկրաբանական կտրվածքի, համաձայն որի ընդհանուր հողային հանույթը կազմում է 9154.43 մ³ է, որից հետլիցքը կազմում է 1122.29մ³, իսկ շուրջ 825մ³ ծավալն իրենից ներկայացնում է հողաբուսական շերտ (համաձայն ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների արդյունքների, տես՝ նաև բաժին 5.1): Վերջինս պահպանումը նախատեսվում է իրականացնել առաջնորդվելով ՀՀ կառավարության 2011թ. սեպտեմբերի 8-ի N1396-Ն և 2017թ. 1404-ն որոշումներով սահմանված պահանջներով՝ տեղական ինքնակառավարման մարմինների հետ համաձայնեցված վայրում:

Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հողը կազմում է մոտ 7207.14 մ³ (9154.43մ³-1122.29 մ³ - 825 մ³), որն իրենից ներկայացնում է 5-րդ դասի վտանգավորության թափոն, իսկ առաջացած թափոնային շինարարական աղբի ընդհանուր քանակը գնահատվում է մոտ 40 տ (տես՝ Առաջացած թափոններ): Այս թափոնները կհեռացվեն տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր, որի վերաբերյալ տեղեկանքը Երևանի քաղաքապետարանից նախատեսվում է ստանալ մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում: Լիցքային աշխատանքների ժամանակ լիցքի մեկ շերտում անթույլատրելի է տարատեսակ գրունտների օգտագործումը: Լիցքային գրունտի յուրաքանչյուր շերտ պետք է լցնել հողային պաստառի ողջ լայնությամբ՝ եզրից դեպի կենտրոն:

Համաձայն ՇՄՆ [«Հիդրոռոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրապարակված տվյալների](#), հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի համաձայն: Նախատեսվող գործունեության արդյունքում հողային ռեսուրսների վրա բացասական ազդեցություններ չեն կանխատեսվում, քանի որ գործունեությունն

իրականացվելու է սահմանափակ տարածքում, որտեղ կիրառվելու են բացասական ազդեցությունները մեղմացնող բոլոր անհրաժեշտ միջոցառումները:

Առաջացած թափոններ: Նախատեսվող գործունեության ժամանակ առաջացող թափոնները հիմնականում 4-րդ և 5-րդ դասի են (համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության (այդ թվում ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N342-Ն հրամանի) և իրենցից ներկայացնում են շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող հետևյալ թափոնատեսակները.

- փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող՝ ծածկագիրը՝ 31401100 08 99 5, շուրջ 7207.14 մ³ ծավալով, որն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր,
- շինարարական աշխատանքներում ներգրավված անձնակազմի կողմից առաջացրած չտեսակավորված կենցաղային աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի)՝ ծածկագիր 9120040001004, որի ընդհանուր քանակը շինարարության ողջ ընթացքում կանխատեսվում է մոտ 5տ: Այն կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:
- շինարարական աղբը՝ ծածկագիր 9120060101004, շուրջ 40 տ, որն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Բոլոր տեսակի թափոնների հեռացումն ու տեղադրումը կիրականացվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված ձևաչափով, որի վերաբերյալ համաձայնությունը նախատեսվում է ձեռք բերել մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը:

Գոյացող, օգտագործվող, այլ անձանց կամ լիցենզավորված կազմակերպության փոխանցվող, ինչպես նաև տեղադրվող թափոնների հաշվառումն իրականացվելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Շինարարական աղբի փաստացի քանակի որոշումը և ծավալաթերթով նախատեսված վճարումը հնարավոր է իրականացնել տեղամասի տեխնիկական հսկողություն իրականացնող ինժեների և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպության համաձայնությամբ:

Բնառեսուրսների օգտագործում: Շինարարական աշխատանքների ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ հետևյալ նպատակներով.

- հողային աշխատանքների ընթացքում տարածքի ջրցանման/փոշենստեցման, հողի/գրունտի խոնավացման համար,
- անձնակազմի խմելու և կենցաղային կարիքների նպատակով:

Շինարարության ընթացքում ժամանակավոր ջրամատակարարման համար ջրի հիմնական աղբյուր կծառայի համայնքային ջրամատակարարման ցանցը, որը շինարարության փուլում ապահովելու է անհրաժեշտ ջրապահանջը:

Ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ մակերևութային հոսքեր չառաջանան և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար:

Թեև շինարարական աշխատանքներն իրականացվելու են գործունեության տարածքի որոշակի հատվածում, այնուամենայնիվ ջրցանի հաշվարկն իրականացվել է տարածքի ողջ չափի համար, որի հաշվարկային մակերեսը կազմում է 4482.13 մ²:

$$U1 = S1 \times K1 \times T, \text{ որտեղ}$$

S1 - ջրվող տարածքի մակերես, 4482.13 մ²,

K1 - 1 մ² օրական ջրցանի նորմ, 0.0015 մ³ (կամ 1.5լ/մ²), չոր և շոգ եղանակի պայմաններում ջրցան իրականացվում է օրական 2 անգամ:

T - հողային աշխատանքների օրերի քանակ, 66 օր:

Հետևապես ջրցանի ջրապահանջը կկազմի.

$$U1 = 4482.13 \times 2 \times 0.0015 \times 66 = \mathbf{887.5 \text{ մ}^3}$$

Աշխատակիցների և բանվորների խմելու և կենցաղային պահանջների համար ջրապահանջը հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$W_{\text{խ.տ.}} = (n \times N \times + n1 \times N1) \times T1, \text{ որտեղ}$$

n - ԻՏ աշխատողների թվաքանակ, 9 մարդ

N - ԻՏԱ ջրածախսի նորմատիվ, 0.016 մ³օր/մարդ

T1 - շինարարության ողջ ժամանակահատվածի աշխատանքային օրերի թիվ, 836 օր

n1- բանվորների (այդ թվում՝ օժանդակ տնտեսությունները) թվաքանակ, 68 մարդ

N1 - բանվորների ջրածախսի նորմատիվ, 0.025 մ³օր/մարդ

$$W_{\text{խ.տ.}} = (9 \times 0.016 + 68 \times 0.025) \times 836 = \mathbf{1541.5 \text{ մ}^3}$$

$$\text{Ընդահանուր ջրապահանջը կկազմի՝ } 887.5 \text{ մ}^3 + 1541.5 \text{ մ}^3 = \mathbf{2429 \text{ մ}^3}$$

Ելնելով շինարարության ոչ մեծ տևողությունից հատուկ շինարարական բազայի ստեղծումը նպատակահարմար չէ: Շին. հրապարակում առաջարկվում է նախատեսել կոնտեյների տիպի հատուկ շինություններ՝ պահակակետ, կենցաղային և գրասենյակային շարժական շինություններ, շինանյութի փակ պահեստ, ամրանային իրերի պատրաստման շվաքարան, բիոզուգարան, աղբի տարրաներ:

Բիոզուգարան նախատեսելու դեպքում դրանց տեղադրումն ու սպասարկումը պետք է իրականացվի մանագիտական կազմակերպության կողմից:

Ժամանակավոր տնտեսության շենքերի և շինությունների վերջնական ցանկը կճշտվի շինարարության ընթացքում և ըստ անհրաժեշտության այլ լրացուցիչ պայմանների ապահովումը կարող է իրականացվել հետագայում:

5. ԵԼԱԿԵՏԱՑԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1 Բնապահպանական պայմանների բնութագիրը

Հետազոտվող տեղամասը վարչական տեսակետից տեղակայված է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի տարածքում:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը տեղադրված է Արարատյան հարթավայրի սահմաններում, նրա հյուսիս արևմտյան մասում: Մակերեսը հարթ է: Ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են ծովի մակարդակից 889.0-890.0 մետրերի սահմաններում:

Կլիմա: Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

«Շինարարական կլիմայաբանություն» ՀՀՇՆ 22-01-2024 շինարարական նորմերի համաձայն՝ ստորև ներկայացված են Երևանի «Էրեբունի» օդերևութաբանական կայանի դիտարկումների մի շարք այլ տվյալներ:

Աղյուսակ 3. Օդի միջին ջերմաստիճան

Բնակավայր	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Երևան «Էրեբունի»	-3.6	-1.0	5.3	12.5	17.4	21.8	25.8	25.2	20.5	13.3	6.3	-0.2	11.9	-28	42

Աղյուսակ 4. Օդի հարաբերական խոնավություն

Բնակավայր	Օդի հարաբերական խոնավությունը, %																
	ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	Հունվ.	Փետր.	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստ.	Սեպ.	Հոկ.	Նոյեմ.	Դեկտ.		Միջին ամսական	Միջին ամսական,	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
Երևան «Էրեբունի»	79	75	62	56	57	49	45	46	49	62	73	79	61	79	67	45	28

Աղյուսակ 5. Մթնոլորտային տեղումներ

Բնակավայր	Տեղումների քանակը <div>միջին ամսական</div> <div>օրական առավելագույն</div> մմ													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	ըստ ամիսների												Տարեկան		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
Երևան «Էրեբունի»	24	23	32	35	45	23	11	8	12	29	28	21	291	128	163
	24	23	34	29	42	34	29	37	51	35	36	28	51		

Աղյուսակ 6. Ջլան ծածկույթ

Բնակավայր	Ջլան ծածկույթը			
	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ջլան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ
Երևան Էրեբունի»	58	47	-	60

Աղյուսակ 7. Քամիներ

Բնակավայր	Ամիսներ	Կրկնելիությունը, %					ըստ ուղղությունների			Անոտորի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին,
		Միջին արագությունը, մ/վ													
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ- արևելյան	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս- արևմտյան							
Երևան «Էրեբունի»	հունվար	4	9	11	14	21	25	12	4	76	0.7	Հվ	2.4	Հվ	2.7
		2.2	2.2	2.2	2.9	2.7	2.3	2.6	2.7						
	ապրիլ	7	14	8	16	20	16	13	6	45	1.9				
		3.1	3.2	2.8	4.0	3.1	3.0	3.8	3.6						
	հուլիս	17	28	4	9	17	13	8	4	36	2.8				
		5.2	5.7	2.8	2.7	2.4	2.7	2.9	4.3						
	հոկտեմբեր	6	18	10	10	21	20	10	5	63	1.0				
		2.9	2.5	2.1	2.5	2.3	2.4	2.9	3.5						

Աղյուսակ 8. Քամու հաշվարկային արագություն

Բնակավայրի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (>15մ/վ) օրերի	Հաշվարկային արագությունը (մ/վ), որը հնարավոր է մեկ անգամ «ռ» տարիների ընթացքում		
				25	50	100
Երևան «Էրեբունի»	912.1	1.5	29	22	27	29

Աղյուսակ 9. Տարվա տաք ժամանակահատվածի կլիմայական հարաչափեր (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Օդի ջերմաստիճանը, °C				
	ապահովվածություն		բացարձակ առավելագույնը	ամենատաք ամսվա միջին առավելագույնը	ամենատաք ամսվա միջին օրական տատանումը
	0.95	0.99			
Երևան «Էրեբունի»	33	34	42	33.3	15.1

Աղյուսակ 10. Տարվա ցուրտ ժամանակահատվածի կլիմայական հարաչափեր (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Օդի ջերմաստիճանը, °C								
	ամենացուրտ օրվա		ամենացուրտ հնգօրյակի		ամենացուրտ ժամանակա հատվածի միջինը	բացարձակ նվազագույնը	ամենացուրտ ամսվա միջին օրական տատանումը	Տևողությունը, օր	
	ապահովվածություն							Միջին ջերմաստիճանը ժամանակահատվածի միջին օրական ջերմաստիճանով՝ ոչ բարձր	
	0.98	0.92	0.98	0.92				0 °C-ից	10 °C-ից
Երևան «Էրեբունի»	-22	-20	-19	-18	-3.8	-28	8.3	70	159

Հիդրոդերկրաբանական պայմաններ: Հիդրոդերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են 20 մետրից խորը հորիզոնների վրա: Ուսումնասիրվող տեղամասում հորատված հորատացքերի հիման վրա գրունտային ջրեր չեն հայտնաբերվել:

Երկրաբանական կառուցվածք: Ուսումնասիրվող տարածքի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են տարբեր հասակների նստվածքները, որոնք

ներկայացված են՝ կավավազներով ավազակավերով և ճալաքարագետաքարային-կոպճային չորրորդական լճային-ալյուվիալ առաջացումներով:

Երկրաբանալիթոլոգիական կառուցվածք: Համաձայն կատարված ուսումնասիրությունների, հորատման և լաբորատոր տվյալների, ուսումնասիրվող տեղամասի ինժեներաերկրաբանական կառուցվածքում մասնակցում են գրունտների հետևյալ 3 շերտերը՝ վերնից-ներքև.

- Շերտ թիվ 1** **Հողաբուսական շերտ**՝ շերտի անցած հզորությունը 0.3-0.4 մետր է: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՀՀՇՆ 32-01-2022-ի աղ. 101-ի 8.2) II կարգ է:
- Շերտ թիվ 2** **Կավավազային գրունտ**՝ կոպիճի, գետաքարի պարունակությամբ: Գրունտը կարբոնատացված է: Շերտի անցած հզորությունը 0.8-1.6 մետր է: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՀՀՇՆ 32-01-2022-ի աղ.101-ի 70% 34.3) II, 30% 5.3) III կարգ են:
- Շերտ թիվ 3** **Գետաքարակոպճային, ավազային գրունտ**՝ շերտի անցած հզորությունը 6,2-8,5 մետր է: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՀՀՇՆ 32-01-2022-ի աղ.101-ի 70% 5.3) III, 30% 5.4) IV կարգ են:

Ինժեներաերկրաբանական հետազոտությունների արդյունքների համաձայն ուսումնասիրվող տեղամասում ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքների իրականացման համար: Որպես բարենպաստ հիմնատակ առաջարկվում է շերտ 3-ի (գետաքարակոպճային, ավազային գրունտ) գրունտները:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները, ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը, ճահճացումը, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում նախագծվող կառույցի վրա, բացակայում են:

Տարածքի սեյսմիկ բնութագիրը: Համաձայն ՀՀՇՆ 20.04-«Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»-ի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի, նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է սեյսմիկ 2-րդ գոտում, որտեղ արագացման առավելագույն մեծությունը կազմում է $A_{max}=0.4g$ և ունի 9 և ավելի բալ սեյսմիկայնություն:

Գործունեության տարածքի գրունտների սեյսմիկ հատկությունների որոշման համար «ԳԵՈԶՈՆ» ՍՊԸ-ի կողմից 2024 թ. իրականացվել են նաև երկրաֆիզիկական համալիր ուսումնասիրություններ, որի շրջանակներում կիրառվել են սեյսմահետախուզական մակերևութային սեյսմիկ ալիքների բազմակապուղի վերլուծության մեթոդը (MASW) և միկրոտատանումների գրանցման (H/V) մեթոդը:

Երկրաֆիզիկական համալիր հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ ուսումնասիրվող տարածքում լայնական ալիքների տարածման միջին արագություններն ընկած են 452-465 մ/վրկ. տիրույթում, հետևաբար՝ գրունտներն ըստ սեյսմիկ հատկությունների **II կարգի** են:

5.2 Բուսական և կենդանական աշխարհ

Ծրագրի իրականացման տարածքը տեղակայված է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քաղաքային ակտիվ գոտում: Տեղանքը գտնվում է զարգացած և ակտիվ միջավայրում, որտեղ ինչպես նաև հարակից տարածքներում բացակայում են էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված որևէ բուսատեսակ և կենդանատեսակ, բացակայում են նաև միգրացիոն ուղիները՝ տարածքի ուրբանացված լինելու պատճառով:

Բոլոր աշխատանքները նախատեսվում է իրականացնել Ներքին Չարբախ 3-րդ փողոց 31/13 հասցեում գտնվող հողատարածքի սահմաններում, որը համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականի, պատկանում է Հայաստանի Հանրապետությանը:

Ծրագրի ազդեցության ենթակա և հարակից տարածքներում չկան նաև ԲՀՊՏ-ներ՝ արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր կամ բնության գրանցված հուշարձաններ: Երևան քաղաքում ներկայումս գործում է Երևանի բուսաբանական այգին և Էրեբունի արգելոցը, որոնք ծրագրի իրականացման տարածքից գտնվում են ավելի քան 1 տասնյակ կիլոմետր հեռավորության վրա:

5.3 Պատմամշակութային հուշարձաններ

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Չարբախ 3-րդ փողոց 31/13 հասցեում գտնվող հողատարածքի սահմաններում: Տվյալ տարածքում, ինչպես նաև նախատեսվող գործունեության հարակից/ազդակիր տարածքներում բացակայում են պատմամշակութային արժեք ներկայացնող կառույցները կամ հուշարձանները, ինչը երևում է նաև «Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» ՀՀ կառավարության [1616-Ն որոշումից](#) (7 հոկտեմբեր, 2004 թ.), ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» ՀՀ կառավարության [385-Ն որոշումից](#) (15 մարտ, 2007 թ.), որոնցում բերված հուշարձանների ցանկում ներառված հուշարձանները որևէ առնչություն չունեն նախատեսվող գործունեության Ներքին Չարբախ 3-րդ փողոց 31/13 հասցեում տեղակայված տարածքի կամ դրան հարակից տարածքների հետ:

Գործունեության տարածքից շուրջ 23.6մ հեռավորության վրա տեղակայված է 1996 թվականին կառուցված Ներքին Չարբախի Սուրբ Խաչ եկեղեցին, որը ընգրկված չէ պատմամշակութային հուշարձանների ցանկում: Այն նախաձեռնողն ու իրականացնողը համայնքի բնակիչներից է: Եկեղեցու տարածքը ցանկապատված է, մուտքը հարակից է գործունեության տարածքի արդեն բարեկարգված հատվածին, ինչը որևէ խոչընդոտ չի առաջանում բնակիչների համար՝ այցելելու եկեղեցի անգամ շինարարական աշխատանքների ժամանակ: ԲԿՊ իր հերթին պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի համար (նախագծում, շինարարություն, շահագործում) հնարավոր ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, որոնց իրականացման արդյունքում տվյալ տարածքի վրա բացասական ազդեցություններ չեն կանխատեսվում:

5.4 Հողօգտագործում, տարածքի բարեկարգում և կանաչապատում

Նախատեսվող գործունեության տարածքը հանդիսանում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցմամբ Հայաստանի Հանրապետությանը պատկանող հողատարածք (0.448213 հա), որի համար առկա է Երևանի քաղաքապետի կողմից 15.06.2022թ. տրված N 01/18-07/1-Դ-4490-515 նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանքը բերված է [հավելված 2](#)-ում):

Հարկ է նշել, որ գործունեության տարածքը նախկինում մասամբ բարեկարգված է եղել Արթուր Աբրահամի կողմից:

Տարածքի մոտ 1772 մ² իրենից ներկայացնում է բարեկարգված և կանաչապատ հատված, որտեղ ներկայումս առկա են խաղահրապարակ՝ հագեցած բացօդյա մարզային սարքերով ու սարքավորումներով, մանկական խաղահրապարակ, ճեմուղի, մոտ 682 մ² կանաչ գոտի: Տարածքի սահմանագծի երկայնքով տնկված են շուրջ 40 հատ պավլոնիա (Paulownia) տեսակի ծառեր, որոնք գործունեության իրականացման արդյունքում որևէ վնաս չեն կրելու: Այս ծառատեսակը լիարժեք կատարում է իր սանիտարահիգիենիկ և գեղագիտական գործառույթները՝ միաժամանակ համապատասխանելով ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 8-ի N108-Ն որոշման 6-րդ և 7-րդ գլխի պահանջներին:

Տարածքն ապահովված է նաև ոռոգման պատշաճ գործող համակարգով:

Բարեկարգված հատվածում առկա են նաև նստարաններ, իսկ միջանկյալ ճանապարհահատվածը սարքավորված է ուղեփակոցով:

Մարզահամալիրի շենքը նախատեսվում է տեղակայել բարեկարգումից ազատ տարածքում, իսկ այն հատվածները, որոնց վնասումը շինարարության ժամանակ կլինի անխուսափելի շինարարության ավարտին նորից կբարեկարգվեն, որի հատակագիծը բերված է հավելված 8-ում:

Շուրջ 682 մ² մակերեսով կանաչապատ տարածքի առկայությունը, որը կազմում է ընդհանուր հողատարածքի ավելի քան 15%-ը, թույլ է տալիս, որ լրացուցիչ կանաչապատման աշխատանքներ չնախատեսվեն, ինչը նաև համապատասխանում է ճարտարապետահատակագծային առաջադրանքով սահմանված պահանջներին: Կլինեն միայն գազոնի տեսքով որոշակի ավելացումներ՝ ընդամենը 24.1 մ² (կամ 0.54%) չափով:





5.5 Օդային ավազան

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից: Օդային ավազանի աղտոտվածության մոնիթորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Երևան քաղաքում գործում է 45 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան: Որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները: Փոշու որոշ փորձամուշներում որոշվել են մետաղների պարունակությունը: Վերջին 5 տարիների ընթացքում դիտվել է ծծմբի երկօքսիդի և գետնամերձ օզոնի կոնցենտրացիաների նվազման, իսկ փոշու և ազոտի երկօքսիդի՝ աճման տենդենց:

Համաձայն «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված տվյալների, Երևան քաղաքի մթնոլորտային օդում որոշված

ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները [2023թ. և 2024թ.](#) համար ներկայացված են ստորև:



5.6 Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

ՀՀ կառավարության 2011 թ. հունվարի 27-ի «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» N 75-Ն որոշմամբ Հայաստանում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների կառավարումը կատարվում է 6 ջրավազանային կառավարման տարածքների միջոցով: Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է 6 ջրավազանային կառավարման տարածքի ջրային ռեսուրսների 151 դիտակետ:

Համաձայն [2024 թ. առաջին եռամսյակի շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ տեղեկագրում](#) բերված տվյալների, 2024 թ.-ին Հրազդանի ՋԿՏ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 20 դիտակետում: Աղտոտված գետերից են Քասախը, Գեղարոտը, Հրազդանը, Գետառը և Ծաղկաձորը:

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի Հրազդան գետի Երևանի հատվածում ջուրը հիմնականում «վատ» որակի է (5-րդ դաս), ինչը պայմանավորված է լուծված թթվածնով, ԹԿՊ₅-ով, ԹՔՊ-ով, ամոնիում և ֆոսֆատ իոններով, մանգանով, ընդհանուր անօրգանական ազոտով, ընդհանուր ֆոսֆորով և կախված մասնիկներով:

Գետառ գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով:

Նախատեսվող գործունեության արդյունքում ջրային ավազանի աղտոտվածության ավելացում չի կանխատեսվում, քանի որ նախատեսվող գործունեության տարածքում և դրա մոտակայքում ջրային ավազաններ չկան, և բացի այդ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումները՝ ուղղված հնարավոր ազդեցությունների նվազեցմանը/կանխմանը:

5.7 Հողեր

Համաձայն ՇՄՆ [«Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրապարակված տվյալների](#), հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010 թ. հունվարի 25-ի N 01-Ն հրամանի համաձայն: 2022-2023 թթ. ընթացքում հողային ծածկույթի՝ ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման դիտարկումներ բացի Մեծամոր, Արմավիր, Կապան, Քաջարան, Մեղրի և Ագարակ քաղաքներից, ինչպես նաև Գեղարքունիքի մարզի Ջիլի հանքային դաշտից (նախկին Ջիլի հանքավայր) որևէ այլ տարածքում չեն իրականացվել: 2023 թ. 4-րդ եռամսյակում հողային ծածկույթի՝ ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն իրականացվել են միայն Լոռու մարզում:

6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6.1. Սոցիալական գործունեություն, ժողովրդագրական կազմ և բնակչություն

Մայրաքաղաք Երևանը գտնվում է Արարատյան դաշտի հյուսիս-արևելյան մասում, սահմանակից է Արագածոտնի, Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերին:

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Բազմաճյուղ արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է: 2021թ. մայրաքաղաքի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 34.0 %,
- շինարարություն՝ 42.9 %,
- մանրածախ առևտուր՝ 69.7 %,
- ծառայություններ՝ 86.8 %:

Երևանի արդյունաբերության հիմնական ոլորտներն են սննդամթերքի, ծախսային արտադրատեսակների, խմիչքների, ինչպես նաև հիմնային մետաղների արտադրությունը: Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է անասնաբուծությունում և բուսաբուծությունում:

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով: Քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են կապն արտաքին աշխարհի հետ:

Շենգավիթ վարչական շրջանը հանդիսանում է մայրաքաղաքի 12 վարչական շրջաններից մեկը և ընդհանուր սահմաններ ունի Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա և Նուբարաշեն վարչական շրջանների հետ: Արտաքին սահմանագծով հարում է Արարատի մարզին:

Համայնքը գտնվում է Երևանի հարավարևմտյան մասում, Հրազդան գետի ձախ ափին: Ընդգրկում է Ներքին Շենգավիթ, Վերին Շենգավիթ, Ներքին Չարբախ, Վերին Չարբախ, Նորագավիթ, Աերացիա թաղամասերը: Շենգավիթը համարվում է արդյունաբերական համայնք, այստեղ են տեղակայված արտադրական մի շարք ձեռնարկություններ՝ «Գրանդ Տոբակո», «Արաքս Գոլդ» հայ-կանադական և «Գրանդ Քենդի» հայ-ռուսական համատեղ ձեռնարկությունները, «Հայ-էլեկտրամեքենա», «Նաիրիտ», «Էլեկտրոն», «Արմեն-Կարպետ», «Երևանի ՋԷԿ» պետական փակ բաժնետիրական և այլ ընկերություններ:

2023թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ [Շենգավիթ վարչական շրջանի մշտական բնակչության թիվը](#) կազմում է մոտ 142.4 հազ. մարդ:

6.2. Բնապահպանական ազդեցություններ

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա հնարավոր են որոշակի բացասական ազդեցություններ, որոնք սակայն կկրեն

Ժամանակավոր բնույթ: Վերջիններս հիմնականում առնչվում են շինարարական աշխատանքների հետ, հետևաբար իրենց բնույթով կլինեն սահմանափակ և կարճատև: Դրանք հնարավոր է կանխել կամ նվազեցնել շինարարական լավ պարկտիկայի արդյունքում:

Նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվում են բնակավայրի տարածքում, ուր բացակայում են բնական լանդշաֆտները:

▪ Օդի աղտոտում

Ծրագրի իրականացման ընթացքում հիմնականում կանխատեսվում է օդի աղտոտում՝ պայմանավորված հողային աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու ժամանակավոր արտանետումներով: Հորատման, բեռնման և թափոնակույտման ընթացքում հողային հանույթից փոշու արտանետումները կարելի է հաշվել ստորև բերված արտահայտությամբ:

$$Q = K1 \times K2 \times K3 \times K4 \times K5 \times K6 \times B \times G \times 10^6 / 3600 \text{ (գ/վ), որտեղ՝}$$

K1 -ը փոշու զանգվածային բաժինն է հողային հանույթում, 0.05

K2 -ը՝ փոշու մասնաբաժինը, որը կարող է անցնել աերոզոլային մասնիկների, 0.02

K3 -ը գործակից է, որը հաշվի է առնում քամու միջին արագությունը (մ/վ), 1.2

K4 -ը գործակից է, որը հաշվի է առնում տարածքի պայմանները, 1

K5 -ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի խոնավությունը, 0.4

K6 -ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի չափերը, 0.1

B-ն գործակից է, որը հաշվի է առնում հողաթափման բարձրությունը, 0.6

G -ն՝ հողային հանույթի զանգվածն է 1 ժամում, տ/ժ

Հողային աշխատանքների տևողությունը գնահատվում է 3 ամիս կամ

$$3 \text{ ամիս} \times 22 \text{ օր} \times 8 \text{ ժամ} = 528 \text{ ժամ/շինարարություն:}$$

Հողային հանույթի ընդհանուր զանգվածը կազմում է $G = 9154.43 \text{ մ}^3: 528 = 17.3 \text{ մ}^3/\text{ժամ}$ կամ, հաշվի առնելով տեսակարար կշիռը՝ $17.3 \text{ մ}^3/\text{ժամ} \times 1.7 \text{ տ/մ}^3 = 29.41 \text{ տ/ժամ}$:

$$Q = 0.05 \times 0.02 \times 1.2 \times 1 \times 0.4 \times 0.1 \times 0.6 \times 29.41 \times 10^6 / 3600 = 0.23 \text{ գ/վրկ}$$

Գումարային փոշու արտանետումները հողային աշխատանքների ժամանակ կկազմի՝

$$0.23 \text{ գ/վ} \times 528 \text{ ժ}/2 \times 3600 \text{ վ}/10^6 = 0.44 \text{ տ/շին. ժամանակահատված}$$

Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված, ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը: Թույլատրված նորմերի սահմաններում ներկայացված արտանետումների պահումը և հնարավոր փաստակար ազդեցությունները կբացառվեն կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման

պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում, մասնավորապես փոշու արտանետումները նվազենելու համար կիրականցվի շինհրապարակի պարբերաբար ջրցանում, շինանյութ տեղափեխող մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի թափքի ծածկման պայմաններում, ինչպես նաև կիրականացվի շին հրապարակ մուտք գործող և լքող մեքենաների անվադողերի լվացում:

Շին. հրապարակի տարածքում կապահովվի նաև օդի որակի մոնիթորինգի սարքավորումների տեղադրումը՝ առցանց հարթակի հասանելիությամբ, համայնքի կողմից տվյալների ստուգաչափման հնարավորությամբ, որի տեխնիկական չափորոշիչները և հասանելիության պայմանները սահմանվում են Երևանի քաղաքապետի որոշմամբ (տես՝ ԲԿՊ, Շրջակա միջավայրի պահպանություն, 5.1 միջոցառումներ):

▪ Աղմուկի և թրթռումների ազդեցություն

Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում (տես՝ ԲԿՊ, 5.2 միջոցառումներ) շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը կանխատեսվում է, որ աշխատատեղերում և մոտակա բնակելի տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը: Կիրականացվեն աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ՝ երեք ամիսը մեկ պարբերականությամբ (տես՝ բաժին 7), որոնք կհամեմատվեն օրենսդրական նորմերի հետ: Բողոքների առկայության դեպքում կկատարվեն նաև լրացուցիչ չափումներ և, ըստ անհրաժեշտության, կձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ:

▪ Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, տարածքի մաքրման, որոշ շինարարական աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով:

Մակերևութային ջրերի վրա ուղղակի ազդեցություն չի կանխատեսվում: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շին. հրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները, իսկ շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ:

Անհրաժեշտ ջրաքանակը շին. հրապարակ է հասցվելու տարածքում գոյություն ունեցող քաղաքային ջրագծից: Ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ մակերևութային հոսքեր չառաջանան և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար:

▪ Թափոնների և այլ նյութերի կառավարումը

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա բազմաբնակարան բազմաֆունկցիոնալ շենքի կառուցման ընթացքում, շինարարական աղբն է և փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չադտոտված հողը,

որոնց տեղափոխությունն ու տեղադրումը կիրականցվի շին. թույլտվությանը սահմանված վայրի և դրանում ներկայացված պահանջների համաձայն:

▪ **Աշխատանքի անվտանգություն և առողջություն**

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները կիրականացվեն կապալառուի կողմից՝ համաձայն ԲԿՊ-ում նկարագրված ընթացակարգի:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Նախատեսվող գործունեության իրականացման տարածքներում (ազդեցության գոտում) լանջափտի, բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա վասակար ազդեցություններ չեն ակնկալվում: Նախատեսված շինարարական աշխատանքների ազդեցությունը բնական լանդշաֆտների վրա կլինի նվազագույն՝ կրելով սահմանափակ և կարճատև բնույթ: Դրանք հնարավոր է կանխել կամ նվազեցնել շինարարական լավ պրակտիկայի արդյունքում:

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում ակնկալվում են դրական ազդեցություններ կապված տվյալ տարածքի հասարակական պայմանների բարելավմամբ՝ ուղղված առողջ ապրելակերպի խթանմանը և պատանինների ֆիզիկական պատրաստվածության բարձրացմանը:

Նախատեսվող գործունեությունը հնարավորություն կտա մարզահամալիրի ապագա սաներին ու մարզիչներին իրենց պարապմունքներն անցկացնել առավել պրոֆեսիոնալ, բարեկարգ և հաճելի միջավայրում:

7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Նախատեսվող գործունեության համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմերին նախատեսվում է ապահովել համաձայն բնապահպանական կառավարման պլանի (ԲԿՊ): ԲԿՊ պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիտորինգի գործողություններ՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին:

ԲԿՊ-ն, որը ներկայացված է [հավելված 9](#)-ում, ընդգրկվելու է ծավալաթերթերում և որպես անբաժանելի բաղադրամաս կցվելու է հիմնական կապալառուի մրցութային և պայմանագրային փաստաթղթերին:

ԲԿՊ-ում ներկայացված են շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների նկարագրությունը, որոնք հնարավոր են ծրագրի իրականացման նախագծման, ինչպես նաև տրված են դրանք կանխող, մեղմացնող միջոցառումները շինարարության և շահագործման փուլերերի համար:

Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ում ներառված միջոցառումների իրականացման համար և իր հերթին համապատասխան պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի և հեղինակային և տեխնիկական հսկողություն իրականացնող մարմինների կողմից կիրականացվեն կանոնավոր մոնիտորինգ ([հավելված 10](#)), որի շրջանակներում բնապահպանության մասնագետի կողմից կիրականացվեն մոնիտորինգի դաշտային ստուգայցեր:

Տեխնիկական վերահսկողությունը պետք է իրականացվի ամենօրյա ռեժիմով, որը ներառելու է նաև բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության հարցերը: Տեխնիկական վերահսկողություն իրականացնող կազմակերպությունը պարտավոր է ժամանակին Պատվիրատուին և/կամ նախագծային կազմակերպությանը տեղեկացնել նկատված անհամապատասխանությունների վերաբերյալ:

Նախատեսված գործունեության շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցմանն ու բացառմանն ուղղված միջոցառումների ծախսերի (ներառյալ՝ մշտադիտարկումները) գումարային գնահատումը կազմում է մոտ 3 մլն. ՀՀ դրամ է:

Մարզահամալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի չափումներ՝ օդի որակի մոնիթորինգի սարքավորումների տեղադրմամբ, որոնք կունենան առցանց հարթակի հասանելիություն և համայնքի կողմից տվյալների ստուգաչափման հնարավորություն:
- Հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
- Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
- Շահագործվող տեխնիկայի և տրանսպորտային միջոցների պարբերական ստուգումներ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, որի պարբերականությունը կորոշվի կախված կիրառվող տեխնիկայի և տրանսպորտային միջոցի տեսակից և շահագործման աշխատաժամանակից:
- Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում:

Շինարարության ողջ ընթացքում մշտադիտարկումների համար հատկացվող գումարի չափը գնահատվում է մոտ 1.8 մլն. ՀՀ դրամ:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կներդրվի բողոքների արձագանքման մեխանիզմ (ԲԱՄ), որը հիմնականում ուղղված կլինի արտաքին շահագրգիռ կողմերի և ազդակիր հասարակության կողմից իրականացվող գործունեության հետ կապված դժգոհությունների ստացմանը, գնահատմանն ու լուծմանը:

ԲԱՄ-ի հիմնական գործառույթները ևս ներկայացված են ԲԿՊ-ում:


«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի համաձայն, նախատեսվող մարզահամալիրում առկա վտանգավոր օբյեկտները, օրենսդրությամբ սահմանված կարգով, կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննությունների:

8. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Չարբախ 3-րդ փողոց 31/13 հասցեում նախատեսված Արթուր Աբրահամի անվան մանկապատանեկան մարզահամալիրի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության շրջանակներում շահառու և ազդակիր հանրությունն իրազեկվել է նախատեսվող գործունեության բնապահպանական ազդեցությունների վերաբերյալ:

Հանդիպումը տեղի է ունեցել 2024թ. հոկտեմբերի 18-ին, ժամը 11:00 Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի նստավայրում (հասցե՝ ք. Երևան, Գ.Նժդեհի 26), որին մասնակցել են Երևանի քաղաքապետարանի, պատվիրատու, նախագծային և ՇՄԱԳ իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև Շենգավիթ համայնքի բնակիչներ:

Հանրային քննարկումները կազմակերպվել են հանրային քննարկման և ծանուցումների իրականացման կարգի համաձայն, ըստ որի հանդիպումից նվազագույնը 21 աշխատանքային օր առաջ հանդիպման վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը հասանելի է եղել «Առավոտ» օրաթերթի 2024թ. սեպտեմբերի 18-ի համարում: Հանդիպման վերաբերյալ հայտարարությունը հասանելի է եղել նաև Երևանի քաղաքետարանի պաշտոնական կայքում:



Նկար 2: «Առավոտ» օրաթերթ, 18.09.2024

Համայնքի ղեկավարի կողմից հանրային քննարկամ կազմակերպման և անցկացման համար պատասխանատու է նշանակվել Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ-էկոլոգ Էլլադա Արամյանը:


Շահագրգիռ հանրությունը հնարավորություն է ունեցել իր առաջարկությունները, դիտողություններն ու կարծիքները Երևանի քաղաքապետարան ուղարկել նաև գրավոր:

Հանդիպման արձանագրությունը և մասնակիցների ցուցակը ներկայացված են [հավելված 12](#)-ում, իսկ հանրային քննարկման ժամանակ իրականացված տեսաձայնագրությունը ներկայացվում է սույն հաշվետվությանը կից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ Օրենք «Շրջակա միջավայարի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», 2014 թ. հունիսի 21:
2. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024թ. հունվարի 15-ի N 03-Ն հրաման ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» ՀՀ շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2011 թվականի սեպտեմբերի 26-ի N 167-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին:
3. ՀՀ կառավարության որոշում N160-Ն, 2 փետրվար, 2006թ.: Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին:
4. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
5. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ, ЕМЕР/ЕЕА, 2009:
6. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
7. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
8. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
9. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
10. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
11. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
12. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
13. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
14. «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքը, ընդունված 2006 թվականի դեկտեմբերի 20-ին: 12. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "նակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում:
15. ՀՀ Կառավարության որոշում N 1325-Ն «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին», 19 նոյեմբերի 2014 թ.:
16. www.arlis.am


ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ


ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 31 մայիսի 2023 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

- ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)**
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
- ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ**
Երևան, Շենգավիթ Ն. Չարբախ 3-րդ փողոց 31/13
- ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՏՏԱԶՆԱԹԵՐԸ**
Նվիրաբերության պայմանագիր՝ 05/05/2023թ. գր/մ 6738
- ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ**
Կադաստրային ծածկագիրը՝ 01-011-0238-0025, 01-011-0238-0039, 01-011-0238-0038
Մակերեսի չափը (հա)՝ 0.374813, 0.0312, 0.0422
Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հաող կառուցապատման, Այլ հողեր
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



ՎԿԱՅԱԿԱՆ N 31052023-01-0335, գաղտնաբառ՝ N8JJEY75CB7L

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կապող է ստորագրի Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 1/2

5. ԾԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ


1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական
2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ
Առկա է 60.1 քմ մակերեսով ինքնակամ շինություններ:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԳՐՀԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ձբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր



ՎԿԱՅԱԿԱՆ N 31052023-01-0335, գաղտնաբառ՝ N8JJEY75CB7L

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կապող է ստորագրի Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 2/2

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԴԱՆՔ



Ձև 1.5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԴԱՆՔ)

N 01/18-07/1-Ղ-4490-515

15.06.2022թ.

Օբյեկտ	Մարզադպրոցի կառուցման
(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, վերանորոգում, ուժեղացում, վերակառուցում, գործառնական կառուցման փուլի անվանումը)	
«Աշխատանքային նախագիծ» (բարձր ժիսկայնության աստիճանի օբյեկտ IV կատեգորիա)	մախագծային փաստաթղթերի մշակման համար
(հաշիվի բնութագրումը, եզրագծային, ժիսկայնության աստիճանը (կատեգորիան), մախագծման փուլերը և այլն)	
Գտնվելու վայրը	Երեւանի մարզի Մարշալ Գրիգոր 3-րդ փողոց 31/13
(վարչական շրջանը, փողոցը, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)	
Կառուցապատող	«Մարտի աշխարհ» ՀՄԴ (յ/ա- հասցեն՝ Երևան, Շահումյան 16 փողոց հ. 104/10 տուն)
(կառուցապատողի անվանումը, գտնվելու վայրը, ֆինանսական ամփոփումը, ազատումը, բնակչության վայրը, հետախույսի հասցեն)	
Առաջարկարարի տրամադրման հիմքը	Կառուցապատողի /յ/ա Արթուր Մանուկյանի հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.22032022-01-0065 վկայականը, նախագծի էքսպերտիզային առաջարկը :
(կառուցապատողի մախագիծը ՀՀ օրենսդրությանը սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոխանցման իրավունքը հաստատող անկախ փաստաթղթեր)	
Առաջարկարարի գործողության ժամկետը	Երեք տարի
(ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N1 հավելվածի 31-րդ կետին համապատասխան)	
Ն Ա Մ Ա Գ Ծ Վ Ո Ղ Հ Ո Ղ Ա Մ Ա Ս Ի Բ Ն ՈՒ Թ Վ Ի Ր Ը (աստղանիշով) (*) Նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)	
1. Հողամասը գտնվում է	Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման, այլ հողեր, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն, սեփականություն, սեփականություն:
(հողամասի դիրքը քաղաքային կամ գյուղական տարածքում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)	
2. (*) Հողամասի լայնքը	0,374813 հա, 0,0312 հա և 0,0422 հա:
(հողամասի սահմանները՝ կողորհնային նշանակությամբ, մակերեսը, (մա))	
3. Հողամասի առկա վիճակը	60,1 րմ մակերեսով ինքնակամ շինություններ, չկառուցապատված ազատ տարածք, առանց օգտագործման ճանապարհ:
(տեղի վիճակի, շինությունների, այլ թվում՝ շանկային ենթակառուցվածքի, օգտագործման, նշանակության, հարկայնություն, շինություններ և այլն), կամայականությունը, բարեկարգումը և այլն)	
4. (*) Տրամադրության պայմանները	Ներքին շարքայի 3-րդ փողոց և Ներքին շարքայի 7-րդ փողոց:
(ճանապարհների, առկայությունը, երկաթուղային տրամադրման ժամկետները և այլն)	
5. (*) Իմեցեմբերական ցանցեր և սարքավորումներ	Նախագծվող և կից տարածքներով անցնող ինժեներական ենթակառուցվածքներ, այլ թվում՝ ստորգետնյա
(ջրամատակարարման, էլեկտրական, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)	
6. (*) Կից հողամասեր	Հատարական նշանակության շինություններ, բնակելի տան օժանդակ շինություն, ելեկտրիկ առանձնացված հողամասով:
(կից հողագործողների ամփոփումը և դրանց սահմանները՝ համաձայն մերկայացված սխեմայի)	
7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմաշինական հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)	Առկա չէ:
(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)	
8. (*) Հատակագծային սահմանափակումներ	Չկա:
(տեղանքում գործող արտադրական, պաշտպանական օբյեկտների, ինժեներատրամադրության ինքնակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումներ, այլ թվում՝ սերվիտուտներ)	
Ն Ա Մ Ա Գ Ծ Վ Ո Ղ Հ Ո Ղ Ա Մ Ա Ս Ի Բ Ն ՈՒ Թ Վ Ի Ր Ը (աստղանիշով) (*) Նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)	
9. Ճարտարապետահատակագծային պահանջներ	Մշակել Ներքին շարքայի 3-րդ փողոց 31/13 հասցեի հողամասում՝ մարզադպրոցի կառուցման աշխատանքային նախագիծ՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.22032022-01-0065 վկայականով՝ ամրագրված հողամասի սահմաններում:
(նկար ՀՀ օրենսդրության և մարտավարական ինժեներական փաստաթղթերի պահանջներով, առկա լուսանկարային նյութերով փաստաթղթերի դրույթներով կամ դրանց բացակայության դեպքում՝ կառավարման (կառավարման)	
9.1. (*) Օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)	
9.2. (*) Ենթակառուցվածքները հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)	
9.3. Թույլատրելի բարձրությունը (մետր)	Մարզադպրոցը նախատեսվել է մինչև չորս հարկանի, հնարավոր է՝ երկու ներքնային կամ նկուղային և կիսանկուղային հարկերով, առավելագույն բարձրությունը՝ մինչև 24,0մ, առաջին հարկի հասակի հիշից: Հնարավոր է նախատեսել հարթ, շահագործվող տանիք/հնարավոր է՝ արնային մարմկոցներ, վահանակների տեղադրման համար:
(սահմանային հարկայնության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների հարակից հատվածում՝ ՀՀՀ 02-2006 «Մշակական շինարարության կառավարման և կառավարման կարգի» համաձայն	
9.4. Կառուցապատման խտության գործակիցը	
(կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսը՝ հողամասի մակերեսին)	
9.5. Կառուցապատման տոկոսը	Մինչև 90%
(կառուցապատման (անջատման) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)	
9.6. Կամայական սահմանափակումներ	10% և ավելի
(կամայական սահմանի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)	

9.7. այլ պահանջներ

- Մարզադպրոցը հողամասում տեղակայվել, ապահովվելով կից հողամասերից և շինություններից նորմատիվային հետախույզություն /անշարժ գույքի սեփականատիրոջ համաձայնագրի առկայության դեպքում հնարավոր է տեղակայվել համաձայնություն հայտնած սեփականատիրոջ հողամասին առավել մոտ:
- Հողամասում հնարավոր է նախատեսել մեկ հարկանի օժանդակ շինություններ /պահակատուն, ենթակայան, կաթսայատուն և այլն:
- Նախագծվող մարզադպրոցի և հողամասում կազմակերպվող մարզական տարածքների /շինությունների/ հատակագծային լուծումները նախատեսել համաձայն պատվիրատուի առաջադրանքի, ապահովելով նորմատիվային պահանջները:

10. Հողամասում գտնվող շենքերի և շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների ենթակամությունը

Հնարավոր է ապամոնտաժել ինքնակամ շինությունները:

11. Ստորգետնյա, կիսանկրողի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

Համաձայն կառուցապատողի առաջադրանքի:

12. (*) Իմ ժնեմբռնված ցանցեր և սարքավորումներ

Պահանջներ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրամատակարարում

կցվում են
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում

կցվում են
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում

կցվում են
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը

(համաձայն ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված էլեկտրոնային տվյալների)

12.5. թույլ հոսանքներ

12.6. աղբահանություն

13. Տարածքի իմ ժնեմբռնված մախապատրաստում

14. Բարեկարգում

(ունիվերսալ կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)
Տարածքը բարեկարգել, հնարավոր է կառուցել պարիսպ /ցանկապատ/:

15. Երկարարական մյուսեր

Երկարներուն, մետաղ, ապակի, սրբատաշ և կոպտատաշ քարե շար, բարձրորակ սվաղ, երեսնապատման և այլ շինարարական նյութեր:
(շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ առաջադրությունները)

16. Պաշտպանական կառույցներ

17. Հակահրդեհային պահանջներ

(արտակարգ իրավիճակներում մարդկանց օրյնությունը պաշտպանության միջոցառումները)
Նախատեսել հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցներ:

18. Հաշմանդամների և քնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ

(հավանություն) անվտանգության ապահովման միջոցառումները)
Նախատեսել հաշմանդամների և ՔՄՆ-երի կենսագործունեության ապահովմանն ուղղված միջոցառումներ՝ նախագծումը (սարքավորման և կառավարման ընտրությունը) կատարելով ՀՀՀՆ IV-11.07.01-2006 (ՄՄՆ 3.02-05-2003) «Ենթերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժ խմբերի համար» շինարարական նորմատիվ փաստաթղթերի պահանջների համապատասխան:

19. Երթակ միջավայրի պահպանում

20. Երկարարական կազմակերպում

(շրջակա միջավայրի վնասվածությունը ազդեցությունից թափանցիկ միջոցառումները)
Մշակել շինարարական աշխատանքների կազմակերպման նախագիծ՝ նկատի ունենալով ՀՀ կառավարության 12.04.2001թ. հ.286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի «ԺԲ» ենթակետի և 44.1 կետի պահանջները, ինչպես նաև՝ Երևան քաղաքի ավագանու 16.03.2012թ. հ.405-Ն որոշմամբ սահմանված լրացուցիչ պայմանները:

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

Երեք տարի, մեկ փուլով՝ «Աշխատանքային նախագիծ»:

(Հաշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

Լ Բ Մ Ց Ա Ն Ն Ե Ր Ը

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը մերկայացվող պահանջներ

ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված N 2-ի՝ պետական համայնի փորձաքննություն:

(Հաշտառման հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության ստանդարտ կամ մոլորակի որակապահովման համակարգի կողմից սահմանված պահանջները)

23. Միջանկյալ համաձայնեցում

(իրավաբան, մարմին կամ շնչատարի հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ շարժական նախագծի նախնական համաձայնեցում, երբևէ է համաձայնեցության փոփոխման հնարավորությունը՝ ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ

25. Համաձայնեցումներ

(Հաշտառման հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)
• Համաձայնեցումների քաղաքական էությունը:

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

27. Այլ պայմաններ

Նախագծի կազմը և բովանդակությունը համապատասխանում է ՀՀ կառավարության առերթի քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2015թ. «Բնակչության ապահովմանը, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը համապատասխանում է ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006թ. հ.273-Ն հրամանի ուժի մտնող հրամանի» հ.286 հրամանով հաստատված դրույթներին:


ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

Գ.Տ.

ՀՐԱՅԱ ՄԱՐԳԱՍՅԱՆ


ԲՊՂ-4490-2022


ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ



Մոտկայքում տեղակայված են հիմնականում 1-3 հարկանի բնակելի անհատական տներ, որոնց հեռավորությունը նախատեսվող մարզահամալիրի շենքից կազմում է նվազագույնը 11,7մ:


Տեղամասի տեղադիրքը WGS-84 ազգային գեոդեզիական կորդինատային համակարգում






ID ...	X	Y
1	8,452,818,310	4,443,975,480
2	8,452,802,424	4,443,994,070
3	8,452,783,195	4,443,977,984
4	8,452,774,871	4,443,987,914
5	8,452,769,417	4,443,994,418
6	8,452,735,391	4,443,966,511
7	8,452,754,240	4,443,940,826
8	8,452,758,619	4,443,935,102
9	8,452,767,582	4,443,939,523
10	8,452,768,304	4,443,939,880
11	8,452,782,992	4,443,942,949
12	8,452,806,401	4,443,917,648
13	8,452,811,139	4,443,921,955
14	8,452,801,764	4,443,931,495
15	8,452,813,176	4,443,942,710
16	8,452,831,192	4,443,960,409
17	8,452,794,617	4,444,003,183
18	8,452,799,046	4,443,998,039
19	8,452,830,419	4,443,925,163
20	8,452,826,975	4,443,922,344
21	8,452,828,255	4,443,920,717
22	8,452,826,854	4,443,919,586
23	8,452,827,898	4,443,918,239
24	8,452,820,677	4,443,912,249


	X	Y
1	8,452,827,888	4,443,962,256
2	8,452,794,110	4,444,001,792
3	8,452,770,120	4,443,989,845
3	8,452,774,342	4,443,984,903
4	8,452,765,182	4,443,985,633
5	8,452,779,537	4,443,968,831
6	8,452,775,732	4,443,965,572
7	8,452,799,377	4,443,937,897

		N 33ԶԿ-ՎՄԱԽԾՁԲ-24/6		
ՏՐԱՆՍԴՐԱԿՏԱՆԻ ՏՐԱՆՍԴՐԱԿՏԱՆԻ	Գ. ԳՐԱՄԱՆԱՅԱՆ Վ. ԵՐԵՄՅԱՆ	ԱՌՈՐԻ ԱՐԴԱՄԱԻ ԱՆԱՆ ՄԱՐԶԱՄԱՍԻՐ		
		3-րդ հոկտեմբեր 31/13 ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՄ ԿԱՐԴԱԿԱՆ ԸՐԶԱՆ, ԵՐԵՎԱՆԻ ՉԱՐԴԱՆ 33	Փուլ Ա.Լ.	Թեղթ 05
ՕՆ ԴԻԶԱՅՆ ՄՈԴ		Հողի շրջանակա՝ 1:500	Թեղթ 53	
		Գ. ԳՐԱՄԱՆԱՅԱՆ ստորագրվող ՏԲԴ-Ա-0258		


ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ



ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐԻ ՀԱՐԿԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ



0.00 ՆԻՇՈՎ ԶԱՐԿԻ ԶՈՆԱԿՈՐՈՒՄ



Ճարտարապետական ծրագրի մարզային թողունակություն	
Նշանակությունը	մարդ./ժամ
Մ/ԿԻՄ	20
Մ/ՏՂԱՄԱՐ	20

Բնակավայրի մարզային թողունակություն	
Նշանակությունը	մարդ./ժամ
Բ/ԿԻՄ	48
Բ/ՏՂԱՄԱՐ	48

ԴԱՆԻՇԻ ՆԱՏՏԵՂ	
Խանութատես	քանակ
Նստատեղ	180

ՏՈՐԵՆ	Վ. ԿԱԴԻՐՅԱՆ
ԾԱՐՏԱՐԱՐՈՒՄ	Գ. ԳՈՎԱԿԱՆԱՅԱՆ
ԾԱՐՏԱՐԱՐՈՒՄ	Վ. ԵՐԵՄՅԱՆ
ՕՆ ԴԻ ԶԱՅՆ ՄԻՋԵ	

N 33ԶԳ-ՀՄԱՆԻՇԶԲ-24/6			
ԱՐԹՈՐ ԱՐԴԱՐԱՆԻ ՆԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՆԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱՄԱՆԻ			
ՀԱՅԿԻՄԻՆԻՍՏ ԶԵՆՈՒՄԻ ՆԵՐՈՒՄԻ ՎԵՐԱԿԱՆԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱՄԱՆԻ	Փուլ	Թերթ	Թերթեր
	Ա.Ն.	18	68
0.00 ՆԻՇՈՎ ԶԱՐԿԻ ԶՈՆԱԿՈՐՈՒՄ	Գ. ԳՈՎԱԿԱՆԱՅԱՆ Արտոնագիր ԵՐԿՎ-0258		


4.800 ՆԻՇՈՎ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՉՈՆԱԿՈՐՈՒՄ



ԸՄԵՇԱՍՏՐԻ ՄԱՐԶԱՐԱԶԻ ԲՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ	
Նշանակությունը	մարդ / ժամ
Ը/ԿԻՆ	35
Ը/ՏՐԱՍՊՈՐՏ	35

ՏՐՈՒՆ	Կ. ՆԱԴԻՐՅԱՆ	N ՀՀԲԿ-ՀՄԱԿԻ ԾՁԲ-24/6		
ԶԱՐՏԱՐԱՐՈՒՄ	Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	ՍՊՈՐՏԻ ՄԱՐԶԱՐԱԶԻ ՆԱԿԱՆ ՄԱԿԱՊԱՏՄԱՆԿԱՆ ՄԱՐԶԱԲԱՍՄԱՆԻ		
ԶԱՐՏԱՐԱՐՈՒՄ	Կ. ԵՐԵՄՅԱՆ	3-րդ ֆուտբոլային թիմի մարզադահլիճի շինարարական ծրագրի զարգացում	Փուլ Ա.Ն.	Թերթ 21
ՕՆ ԴԻԶԱՅՆ ՄԴԸ		4.800 ՆԻՇՈՎ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՉՈՆԱԿՈՐՈՒՄ	Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ արտոնագիր ԾԲԴԿ-0258	

10.200 ՆԻՇՈՎ ՀԱՐԿԻ ՉՈՆԱԿՈՐՈՒՄ



ԲՈՒՄԻ ՍԱՐՉԱՍՐԱՆԻ ՀԱՆԴԵՐՁԱՐԱՆԻ ԹՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ	
Նշանակությունը	մարդ / ժամ
ԲՈՒՄԻ ՀԱՆԴԵՐՁԱՐԱՆ ԿԱՆԱՏԻ	25
ԲՈՒՄԻ ՀԱՆԴԵՐՁԱՐԱՆ ՏՊԱՍԱՐԿԱՆՑ	25

ՏՆՈՐԵՆ	Վ. ԽՈՒՐՈՏԱՆ	N 33ԶԿ-ՀՄԱՆԾՁԲ-24/6		
ԴԱՐՏԱՐԱՆԻ ԲԱՐՏԱՐԱՆԻՑ	Գ. ԳՈՒԴԱՆՆԱՆՅԱՆ Վ. ԵՐԱՆՈՒՄԻԱՆ	ՍՈՐԹՈՒՐ ԱՐԲԱՐԱՆԻ ՆԱԿԱՆ ՍԱԿԱՄԱՏԱՆԵԿԱՆ ՍԱՐՉԱՍՐԱՆԻ		
		3-րդ ֆուրդ 33/13 շենքի մեջ, ԵՃԱԿԱՌԻՎԱՐՉԱԿԱՆ ԵՐԱՆ, ՆՈՐԹԻ ՀԱՐԲԱՆԻՉ		
		Փուլ	Թերթ	Թերթեր
		Ա.Ն.	23	68
ՕՆ ԴԻՉԱՅՆ ՄՈԸ		10.200 ՆԻՇՈՎ ՀԱՐԿԻ ՉՈՆԱԿՈՐՈՒՄ		Գ. ԳՈՒԴԱՆՆԱՆՅԱՆ, ԱՐԽԱՆԱՎՈՐ ԾԲԴ-Ա՝ 0258

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Տեխնիկական պայման՝ ՀԷՑ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ

ELECTRIC NETWORKS OF ARMENIA

ЭЛЕКТРИЧЕСКИЕ СЕТИ АРМЕНИИ

ՀՀ, ք. Երևան, Ա. Արմենակյան փող. 127

N ՏՊ-ԾՀԱ-0.4/0685

<<01>> 10 2024թ.

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԾՀԱ փրամադրելու համար

Տրվում է Երևանի քաղաքապետարանի Քաղաքաշինական հատուկ ծրագրերի վարչության պետի ԺՊ Ա. Վարդապետյանին (50/159721-24)

Սպառիչի գործունեությունը և հասցեն՝ ք. Երևան, Ն. Չարբախ փ. 31/13

Պահանջվող դրվածքային հզորություն՝ 535 կՎԱ

Սնող ցանցի լարումը՝ 6 կՎ

1. էլ. մատակարարումն իրականացնելու համար անհրաժեշտ է դիմումատուի կողմից տեղադրել 630 կՎԱ հզոր. ենթակայան
2. Նոր ենթակայանի էլ. սնումն հնարավոր է իրականացանցել ԲԵ 0031 ենթակայանի 6 կՎ ԲՄ-ից :
3. Անվտանգության գոտիները խախտված չեն:
4. Հիմնական էլեկտրամատակարարման իրականացման համար, անհրաժեշտ է դիմել «ՀԷՑ» ՓԲԸ ցանկացած սպասարկման կենտրոն՝ ներկայացնելով ՀԾԿՀ 25.12.2019թ., №523-Ն 159 կետի պահանջներով նախատեսված փաստաթղթերն ու տեղեկատվությունը:

Տեխնիկական տնօրեն

Դ. Գրիգորյան |

ԱՏԾ պեմ
Կ. Միքայելյան

Տեխնիկական պայման՝ Վեոլիա Ջուր ՓԲԸ



«Հաստատում եմ»

Կրտադրատեխնիկական բաժնի պետ՝

Ա.Մարտիրոսյան

«07» 11 2024թ.

Տեխնիկական պայման ՎՋ 5294/2024

(Ջրամիացման և/կամ՝ ջրահեռացման նախագծման)

Ք.Երևան, Շենգավիթ, Ն.Չարբախ 3-րդ փողոց 31/13

/Տարածքի նապե/

Հայաստանի Հանրապետություն

/Ամուն, ազգանուն/

011514005

/Հեռախոսահամար/



442964

Համակարգ	Ջրամատակարարում	Ջրահեռացում	Հեղեղատար	Հրդեհաշիջում
Կոմունիկացիայի գտնվելու վայրը	3-րդ փողոց	3-րդ փողոց		
Գործող խողովակի տրամագիծը, ճնշումը, տեսակը	d=100մմ, P=1.2մբն. պող.	d=300մմ		
Միացման կետը	3-րդ փողոցով անցնող ջրագծից	3-րդ փողոցով անցնող կոյուղագծին		
Միացման տրամագիծը	Համաձայն նախագծի			
Ջրաչափի տրամագիծը				
Այլ պահանջներ	Ջրաչափական հանգույցի համար կառուցել դիտահոր	Կոյուղագծի միացման կետում կառուցել դիտահոր	Համաձայն ՀՀՇՆ. 40-01.01-2014թ. 307 կետի	Տես * կետը
Ջրամատակարարման գրաֆիկը	Շուրջօրյա			

Կառուցման աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ է տվյալ ոլորտում լիցենզավորված կազմակերպությանը պատվիրել նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և դրանք համաձայնեցնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ :

Կառուցման աշխատանքների տեխնիկական հսկողությունը, դիմողի հայեցողությամբ, իրականացնում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն կամ ընկերության պաշտոնական կայքում հրապարակված ցանկում ընդգրկված կազմակերպությունը՝ դիմողի հաշվին :Կառուցված մոր համակարգի միացումը ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին իրականացնում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ՝ դիմողի հաշվին :

Մույն տեխնիկական պայմանը ուժի մեջ է 1 (մեկ) տարի՝ գրանցման օրվանից սկսած, այն ենթակա է երկարացման մինչև տեխնիկական պայմանի ժամկետի ավարտը՝ դիմողի կողմից ներկայացրած դիմումի հիման վրա:

Կառուցման ընթացքում, հողային աշխատանքներն իրականացնելիս, անհրաժեշտ է ձեռք բերել տվյալ համայնքի ղեկավարի, այլ իրավասու և/կամ շահագրգիռ մարմինների կամ անձանց թույլտվությունները և/ կամ համաձայնությունները:

* Հրդեհաշիջումը նախատեսել համաձայն ՀՀՇՆ 40.01.02-2020թ. և ՀՀ Կառ. 08.08.2019թ թիվ 1025-Ն որոշման, թիվ 29 հավելվածի, հիդրանտի տեղադրման դեպքում կառուցել դիտահոր:

Մույն տեխնիկական պայմանով տրամադրվում է դիմումատուի կողմից ներկայացված ջրապահանջին համապատասխան 0.7/վ ջրաքանակ:


Ինժեներական խմբի պատասխանատու՝



Ա.Կարապետյան



ՇԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԿԵՐԳԵՏՆՅԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ



ՏՆՕՐԵՆ	Վ. ԽԱՊԻՐՅԱՆ	N 3324-ՅՄԱՆԾՁԲ-24/6		
ԺԱՐՏԱՐԱՐՈՑ	Գ. ԶՈՒԲԱՆԱՅԱՆ	ԱՐԹՈՒՐ ԱՐԴԱՅԱՄԻ ՆԱԿԱՆ ՄԱՍԿԱՐԱՏԱՆԵԿԱՆ ՍԱՐԶԱՄԱՄԻՐ		
ԺԱՐՏԱՐԱՐՈՑ	Վ. ԵՐԵՄՈՒՐԱՆ	ՀՐԳԵՏՆՅԱ ԵՆՈՒՑԱՆ ԵՆԱԿԱՐԳԵՏՆՅԱՆ ԵՐԱՆԱԿԱՆ ԺԱՐՏԱՐԱՐՈՑ		
ՕՆ ՊԻՋԱՆՑ ՄՈԴ	ՍՈՆ ԴԵՑԻՆ	ՇԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԿԵՐԳԵՏՆՅԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴԱՅԱՄԻ ՆԱԿԱՆ	Փուլ Ա.Ն.	Թեղք 5
			Թեղքեր 13	
			Գ. ԶՈՒԲԱՆԱՅԱՆ Արտոնագիր ՃՐԿ-0258	

7.2. Ժամանակացույց

	ԼԱԽԱՏԵԱԿՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՇԻՎՈՂԱՊՈԻԹՅԱՆ ՊԼԱՆ	ԱՇԽԱՏԱՆՔԱՑԻՆ ՕՐԵՐ																																					
		1 ԱՄԻՍ	2 ԱՄԻՍ	3 ԱՄԻՍ	4 ԱՄԻՍ	5 ԱՄԻՍ	6 ԱՄԻՍ	7 ԱՄԻՍ	8 ԱՄԻՍ	9 ԱՄԻՍ	10 ԱՄԻՍ	11 ԱՄԻՍ	12 ԱՄԻՍ	13 ԱՄԻՍ	14 ԱՄԻՍ	15 ԱՄԻՍ	16 ԱՄԻՍ	17 ԱՄԻՍ	18 ԱՄԻՍ	19 ԱՄԻՍ	20 ԱՄԻՍ	21 ԱՄԻՍ	22 ԱՄԻՍ	23 ԱՄԻՍ	24 ԱՄԻՍ	25 ԱՄԻՍ	26 ԱՄԻՍ	27 ԱՄԻՍ	28 ԱՄԻՍ	29 ԱՄԻՍ	30 ԱՄԻՍ	31 ԱՄԻՍ	32 ԱՄԻՍ	33 ԱՄԻՍ	34 ԱՄԻՍ	35 ԱՄԻՍ	36 ԱՄԻՍ	37 ԱՄԻՍ	38 ԱՄԻՍ
1.	ԿԱՊԻՄԻ ՄՐՁՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ																																						
2.	ՇԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ																																						
3.	ԺԱՄԱՏԱԿԱԿՈՐ ԻՆՃ. ՑԱՆՁԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ																																						
4.	ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ																																						
5.	ՀԻՄՔԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ԱՏՈՐԳԵՏՆՅԱՆ ՀԱՐԿԻ																																						
6.																																							
7.	ԱՏՈՐԳԵՏՆՅԱՆ ՀԱՐԿԻ ՋՐԱՄԵԿՈՒՄԱՑՈՒՄ																																						
8.	ԳՐՈՒՆՏՆԵՐԻ ՀԵՏ ԼԻՁՔ և ՏՈՓԱՆՈՒՄ																																						
9.	ՇԵՆՔԻ ԿԵՐԳԵՏՆՅԱՆ ԿՈՂՈՂ ՏԱՐԱԾԱԿԱՆ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԻ ԿԱՊՈՒՑՈՒՄ																																						
10.	ԱՇԽԱՏԱԿԱՆ ՖԵՐՄԱՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏԱՆ ԵՎ ՄՈՏՏԱԺՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ																																						
11.	ՏԱՆԻՔԻ ԱՆՋՐԱՆՑԻԿ ՇԵՐՏԵՐԻ ՊԼԱՆ																																						
12.	ՊԵՐՈՓԱԿՈՂ ՊԼԱՆԵՐԻ ՇԱՐՈՒՄ																																						
13.	ՄԻՋՆՈՐՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ																																						
14.	ՇԻՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐՊԱՐՈՒՄ																																						
15.	ԱՐՏԱՔԻՆ ԻՆՃԵՆԵՐԱԿԱՆ ԳԾԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ																																						
16.	ՆԵՐՔԻՆ ԻՆՃԵՆԵՐԱԿԱՆ ԳԾԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ																																						
17.	ԼՈՒՍԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԴՈՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ																																						
18.	ԿԵՐԵԼԱԿՆԵՐ ԵՎ ԱԿՏՈՄԱՏԻԿԱ																																						
19.	ՆԵՐՔԻՆ ՀԱՐՊԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ																																						
20.	ԻՆՃ. ԳԾԵՐԻ ԵՎ ԱԿՏՈՄԱՏ. ՓՈՐՁԱՐԿՈՒՄ																																						
21.	ՏԱՐԱԾՔԻ ՄԱՔՐՈՒՄ / ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ																																						
22.	ԱԿԱՐՏԱԿԱՆ ՓԱՍՁԱԹՅՈՒՆԻ ՉԵԿԱԿԵՐՊՈՒՄ																																						

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԿԱԶՄՈՒՄ Է 38 ԱՄԻՍ



ՀԱՎԵԼՎԱԾ 9. ԲՆԱԴԱՅՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ (ԲԿՊ)

Ծրագրի գործողություններ	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումներ	Պատասխանատու մարմին
Ն Ա Ֆ Ա Շ Ի Ն Ա Ր Ա Ր Ա Կ Ա Ն Փ ՈՒ Լ			
1. Հանրային լուսմեր, հանրության իրազեկում	Հանրության ոչ պատշաճ տեղեկացվածությունը և հնարավոր բողոքները կարող են նախատեսվող գործունեության իրականացման ժամկետների ձգձգման պատճառ դառնալ:	1.1. Նախատեսվող գործունեության նախագծի և ԲԿՊ-ի վերաբերյալ առաջին հանրային քննարկումը անցկացրվել է ա.թ. հոկտեմբերի 18-ին՝ ժամը 11:00-ին Երևանում (հասցե՝ ք. Երևան, Գ. Նժդեհի 26): Հանրային քննարկման հայտարարությունը տպագրվել է «Առավոտ» օրաթերթի 2024թ. սեպտեմբերի 18-ի համարում:	«ՕՆ Դիզայն» ՍՊԸ
2. Պայմանագրային փաստաթղթերի պատրաստում	ԲԿՊ-ի պահանջներն անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային նախագծում, որի արդյունքում հնարավոր են բնապահպանական բացասական ազդեցություններ՝ շինարարության և շահագործման փուլերում:	2.1. Աշխատանքային նախագիծը անհրաժեշտ է մշակել հաշվի առնելով ԲԿՊ-ում պլանավորված մեղմացնող միջոցառումները, որոնք պետք է ներառված լինեն նաև պայմանագրային փաստաթղթերում:	«ՕՆ Դիզայն» ՍՊԸ
Շ Ի Ն Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ Ա Ն Փ ՈՒ Լ			
Առողջություն և աշխատանքային անվտանգություն			
3. Շինարարական հրապարակի բոլոր գործողությունները	ԲԿՊ-ի պահանջների չկատարումը և բնապահպանական պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող են շրջակա միջավայրի վատթարացման պատճառ դառնալ: Շինհրապարակի ոչ պաշաճ կազմակերպման պատճառով աշխատողների, ինչպես նաև շինհրապարակի մերձակայքում բնակվող մարդկանց ցանկացած վնասվածքն անընդունելի է:	3.1. Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/ աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում: 3.2. Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար. (ցանկապատում, պահակակետ և այլ): 3.3. Անհրաժեշտ է բացառել անվտանգության կանոնների խախտման դեպքերը (օր. չհսկված էլեկտրական գործիքների առկայությունը շինհրապարակում և այլն): 3.4. Անհրաժեշտ է ապահովել կրակմարիչի առկայությունը և դրանց հեշտ հասանելիությունը շինհրապարակում և կիրառվող տեխնիկայում: 3.5. Անհրաժեշտ է ապահովել առաջին բուժ օգնության միջոցների առկայությունը և դրանց հեշտ հասանելիությունը շինհրապարակում: 3.6. Բանվորական և այլ անձնակազմը պետք է ապահովվի սեզոնային արտահագուստով և այլ անհատական պաշտպանության միջոցներով, որոնք պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ): 3.7. Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել: 3.8. Աշխատողները պետք է անցնեն աշխատանքի անվտանգության հրահանգավորում, ինչը պատշաճորեն պետք է գրանցվի համապատասխան գրանցամատյանում: 3.9. Խստորեն պետք է պահպանվեն ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության պահանջներն ու նորմերը:	Կապալառու
Հանրության հետ կապ և հանրային իրազեկում			
4. Հանրության	Ազդակիրների թերի իրազեկվածութ	4.1. Շին. աշխատանքները սկսելուց առաջ ազդակիրները կտեղեկացվեն ԲԱՄ-ի մասին,	«ՕՆ Դիզայն» ՍՊԸ

<p>իրագրված, բարձրագույն, բողոքարկման մեխանիզմ</p>	<p>յուն, տեղեկատվության և փոխադրման պակասը կարող է հանգեցնել դժգոհությունների, որի արդյունքում հնարավոր են նախատեսվող գործունեության ժամկետների հետաձգումներ:</p>	<p>համաձայն որի. Ա: Անհրաժեշտ է տեղադրել ցուցանակներ/տեղեկատվական վահանակներ, որոնք պարունակում են տեղեկատվություն շինարար կազմակերպության, նրա գտնվելու վայրի, աշխատանքային ժամերի, պատասխանատու անձանց և նրանց հեռախոսահամարների / էլեկտրոնային հասցեների մասին: Բ: Շին հրապարակում անհրաժեշտ է ունենալ բողոքների գրանցամատյան (բողոքի գրանցման ձևը՝ տես հավելված 11-ում) և նշանակել պատասխանատու անձ, ով 15 օրյա ժամկետում պետք է պատասխանի դիմորդին՝ հարցի լուծման վերաբերյալ:</p>	<p>Կապալառու</p>
<p>Շրջակա միջավայրի պահպանություն</p>			
<p>5. Հողային աշխատանքներ, շինանյութերի փոխադրումներ, շինարարական այլ աշխատանքներ</p>	<p>1. Տրանսպորտային միջոցների երթևեկությունից, ինչպես նաև շին տեխնիկայի շահագործումից առաջացած փոշու և այլ արտանետումների ազդեցությունը; 2. Շին աշխատանքների արդյունքում աղմուկի և թրթռումների մակարդակի աճի հետևանքով ազդեցությունը:</p>	<p>5.1. Օդի աղտոտման և փոշու կառավարում 5.1.1. Փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով շինհրապարակի տարածքում պարբերական ջրցանումների իրականացում: 5.1.2. Շին. հրապարակի տարածքում պետք է ապահովվի օդի որակի մոնիթորինգի սարքավորումների տեղադրումը՝ առցանց հարթակի հասանելիությամբ, համայնքի կողմից տվյալների ստուգաչափման հնարավորությամբ, որի տեխնիկական չափորոշիչները և հասանելիության պայմանները սահմանվում են Երևանի քաղաքապետի որոշմամբ: 5.1.3. Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և պահել կուտակված նյութերը հնարավորինս ծածկված վիճակում փոշու հնարավոր տարածումից խուսափելու համար: 5.1.4. Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով 5.1.5. Անհրաժեշտ է սահմանափակել մեքենաների արագությունը փոշու քանակը նվազեցնելու նպատակով: 5.2. Աղմուկի և թրթռումների կառավարում 5.2.1. Շին. հրապարակում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին, իսկ չափազորումներ կիրականացվեն ըստ անհաժեշտության՝ ազդակիր անձանց կողմից բողոքի դեպքում: 5.2.2. Աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին՝ սահմանափակվելով միայն թույլատրված ժամերի միջակայքում: 5.2.3. Մեքենաների ապահովվում խլացուցիչներով: Անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործման բացառում: 5.2.4. Շինարարության մեջ ներգրավված բանվորներին ԱՊՄ-ով, այդ թվում՝ ակնհայտակներով, ապահովում: 5.3. Բուսականության կառավարում 5.3.1. Շին. հրապարակի կազմակերպման պահից կազմակերպել շին. հրապարակի սահմաններում ներառված պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում և հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում առկա ծառերը, թփերը և կանաչ տարածքները մեխանիկական կամ այլ ժառանգությունից պաշտպանելու համապատասխան միջոցառումներ՝ հիմնվելով Երևան քաղաքի ավագանու 2012թ. մարտի 16-ի «Քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերով սահմանված նորմերի Երևանում իրականացման լրացուցիչ</p>	<p>Կապալառու</p>

		պայմանների կարգը սահմանելու մասին» N405-Ն որոշման հավելվածի 11-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն:	
Շինարարական հրապարակի կազմակերպում			
6. Շինհրապարակի կազմակերպում	Շինհրապարակի ոչ ճիշտ կազմակերպումից բխող ազդեցություններ	<p>6.1. Շին հրապարակն անհրաժեշտ է կազմակերպել բացառապես կառուցապատման ենթակա տարածքի ներսում:</p> <p>6.2. Շին. հրապարակի մուտքին հարող տարածքը և ժամանակավոր ցանկապատը պետք է մշտապես պահպանվի մաքուր վիճակում, ինչպես նաև բացառվի շին. հրապարակի ցանկապատից դուրս շինարարական աշխատանքների իրականացումը, շինարարական նյութի կուտակումը կամ պահպանումը:</p> <p>6.3. Շին հրապարակի կազմակերպման սխեմայում պետք է նշված լինեն շին. նյութերի պահեստավորման, նյութերի և թափոնների ժամանակավոր կուտակման տեղերը, մեքենաների և սարքավորումների կայանատեղերը և այլն:</p> <p>6.4. Անհրաժեշտ է իրականացնել շինհրապարակի ցանկապատում, համապատասխան տեղեկատվական ցուցանակի ու մուտքն արգելող նշանների տեղադրում:</p> <p>6.5. Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել բաց տեղամասերի քանակը, հետլիցքն իրականացնել հնարավորինս կարճ ժամկետներում, տեղադրել նախազգուշացնող նշաններ:</p> <p>6.6. Շինարարական անձնակազմը կօգտվի գոյություն ունեցող կենցաղային միջոցներից, կոյուղաջրերի հեռացումը շինհրապարակից պետք է իրականացվի ընդհանուր կոյուղու համակարգի միջոցով,</p> <p>6.7. Կառուցման աշխատանքների ընթացքում պետք է կազմակերպվի շինարարությանը համապատասխան բարձրությամբ շենքի ծածկումը 180գրամ/քմ խտությամբ ցանցով,</p> <p>6.8. Շին. հրապարակի տարածքից բեռնատար մեքենաների ելքը դեպի փողոց մաքուր անվադողերով ապահովելու համար պետք է կազմակերպի դրանց լվացումը շին. հրապարակի ելքի հատվածում՝ հատուկ մետաղական էստակադայի վրա:</p> <p>6.9. Ջրցանի ծավալները կհաշվարկեն այնպես, որ մակերևութային հոսքեր չառաջանան և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար;</p> <p>6.10. Տարածքի հոսքերը կմիավորվեն մեկ բակային ցանցում և կմիացվեն կոյուղու համակարգին:</p>	Կապալառու
Երթևեկության կառավարում			
7. Շինհրապարակ մուտք ու ելք գործող մեքենաներ	<p>Երթևեկության հնարավոր ազդեցություններն են.</p> <ul style="list-style-type: none"> • երթևեկության խափանումներ • երթևեկության հետ կապված վտանգներ և անվտանգության խնդիրներ • փոշու, աղմուկի և թրթռուների մակարդակի աճ • հասարակական ճանապարհների վրա ցեխի և շին աղբի տարածում • շինարարական ծանր 	<p>7.1. Մեքենաների և բեռնատարների երթևեկությունը անհրաժեշտ է կազմակերպել հասարակական երթևեկությանը և հիմնական հանրային ճանապարհին նվազագույն անհարմարություններ և զրգուրներ առաջացնող սկզբունքով:</p> <p>7.2. Անհրաժեշտության դեպքում, ձեռնարկել ճանապարհին հասցրած զրգուրների վերականգնման աշխատանքներ՝ ապահովելով ճանապարհների նախնական վիճակը:</p> <p>7.3. Դեպի շին. հրապարակ մուտքն ու ելքը պետք է կազմակերպել ընդհանուր երթևեկության և հասարակական անվտանգության համար նվազագույն խոչընդոտներով:</p> <p>7.4. Անհրաժեշտ է խուսափել գործողություններից, որոնք կարող են ճանապարհների խցանումների պատճառ դառնալ:</p> <p>7.5. Մեքենաների և սարքավորումների կայանատեղին անհրաժեշտ է կազմակերպել միայն սահմանված վայրերում:</p> <p>7.6. Անհրաժեշտ է ապահովել բեռնատարների ծածկով երթևեկումը շինհրապարակը</p>	Կապալառու

	սարքավորումների և փոխադրամիջոցների կողմից ճանապարհներին փաստ	լքելիս: 7.7. Անհրաժեշտ է իրականացնել փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի կանոնավոր գնում՝ վառելանյութի և յուղի արտահոսքը կանխելու համար: 7.8. Անհրաժեշտ է դադարեցնել արտահոսքեր ունեցող մեքենաների աշխատանքը և փոխարինել պատշաճ վիճակում գտնվող մեքենաներով:	
Արտակարգ իրավիճակների կառավարում			
8. Վտանգավոր նյութերի օգտագործում և այլ արտակարգ իրավիճակների դեպքեր (դժբախտ պատահարներ և այլն)	Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ:	<p>8.1. Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;</p> <p>8.2. Շինհրապարակը պետք է ապահովված լինի արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար:</p> <p>8.3. Վտանգավոր նյութերի կառավարումը պետք է իրականացնել համապատասխան ՀՀ օրենսդրական պահանջներին;</p> <p>8.4. Վտանգավոր նյութերն ու վառելանյութն պետք է պահել ծածկված, ապահով և բնական ճանապարհով օդափոխվող տարածքում՝ ապահովված անթափանց հատակով և պատնեշով:</p> <p>8.5. Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը:</p> <p>8.6. Շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, հրշեջ հիդրանտներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:</p> <p>8.7. Մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար:</p> <p>8.8. Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում՝ ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել ջրանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ:</p> <p>8.9. Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագություն, անհողմություն, մառախուղ) դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոնները կամ շին. աշխատանքները դադարեցնել մինչ օդերևութաբանական պայմանները կլինեն բարենպաստ աշխատանքները վերսկսելու համար:</p> <p>8.10. Արտակարգ պատահարի դեպքում դրանք պետք է գրանցվեն:</p>	Կապալառու
Թափոնների և նյութերի կառավարում			
9. Շինհրապարակ և աշխատանքներ	Շին աղբի տեղադրումը անհամապատասխան վայրերում, ջրահեռացման համակարգ ներթափանցող թափոնները և աղտոտիչները և	<p>9.1. Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:</p> <p>9.2. Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն</p>	Կապալառու

	<p>շինարարական այն նյութերը, որոնք չեն մաքրվում շինհրապարակից, իրենցից ներկայացնում են պոտենցիալ վտանգ:</p>	<p>ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:</p> <p>9.3. Կանոնավոր կերպով (ամենաուշը 2 օրը մեկ) շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շին. թափոններն ու աղբը՝ փոշու և շին աղբի երկարատև կուտակումը և երթևեկության խոչընդոտները կանխելու համար;</p> <p>9.4. Շին հրապարակի տարածքում անհրաժեշտ է հատկացնել շին աղբի նախնական կուտակման վայր:</p> <p>9.5. Շինարարական հավաքված վտանգավոր թափոնները պետք է պատշաճ կերպով հավաքվեն և հեռացվեն համապատասխան արտոնագիր ունեցող կազմակերպությունների կողմից պլանային ագրային հիմունքներով:</p> <p>9.6. Պետք է կատարվեն թափոնների հեռացման վերաբերյալ համապատասխան գրանցումներ/գրառումներ՝ որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ և նախատեսվածի համաձայն:</p> <p>9.7. Կենցաղային աղբի հավաքումը պետք է իրականացվի դրա համար նախատեսված տարրաներում և պարբերաբար հեռացվի համապատասխան աղբահավաք կազմակերպության կողմից՝ պլանային ագրային հիմունքներով:</p> <p>9.8. Անհրաժեշտ է բացառել շինանյութերի և շին. աղբի կուտակումը շինհրապարակից դուրս՝ մասնավոր կամ հասարակական տարածքում, ինչպես նաև շին. աղբի հեռացման նպատակով հասարակական աղբամանների օգտագործումը:</p>	
Աշխատողների վերապատրաստում			
10. Աշխատողների վերապատրաստում	<p>Թերի իրազեկվածության և տեղեկատվության պակասից բխող ազդեցություններ:</p>	<p>10.1. Անհրաժեշտ է իրականացնել բոլոր աշխատողների համար ԲԿՊ պահանջների մասին դասընթացներ՝ այդ թվում թափոնների ճիշտ կառավարման, տարածքը մաքուր պահելու և այլն;</p> <p>10.2. Բոլոր աշխատողներին անհրաժեշտ է նաև իրազեկել աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների արարողակարգի մասին;</p>	«ՕՆ Դիզայն» ՍՊԸ, Կապալառու
Աշխատանքային տեղամասի վերականգնում, բարեկարգում, տարածքի կանաչապատում			
11. Շինհրապարակի վերականգնում, տարածքի բարեկարգում, կանաչապատում	<p>Անհրաժեշտ է շին. հրապարակից հեռացնել շին. տեխնիկան, բոլոր շին. պարագաները, շին. նյութերը, թափոնները և այլն:</p>	<p>11.1. Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ կապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատը և այլն:</p> <p>11.2. Անհրաժեշտ է վերականգնել բոլոր Ֆասսված կամ տեղահանված կոմունիկացիաները;</p> <p>11.3. Անհրաժեշտ է մաքրել շինհրապարակը կենցաղային և այլ աղբից, հեռացնել յուղի, վառելիքի արտահոսքի հետքերը;</p> <p>11.4. Անհրաժեշտ է կատարել նախագծով նախատեսված բարեկարգման աշխատանքները:</p> <p>11.5. Անհրաժեշտ է ապահովել կանաչապատման աշխատանքները՝ Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի համաձայն:</p>	Կապալառու
ՀԵՏՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈԽԼ			
12. Թերությունների վերացման աշխատանքներ	<p>Շինարարական փուլի համար սահմանված բոլոր ազդեցությունները</p>	<p>12.1. Անհրաժեշտ է ապահովել նախագծով նախատեսված բոլոր աշխատանքների պատճառ իրականացումը:</p>	Կապալառու

ՀԱՎԵԼՎԱԾ 10. ԲՆԱՊԱՅՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

Վայր/ Գործողություն/ Փուլ	Մոնիտորինգի ենթակա պարամետրեր	Մոնիտորինգի կետեր	Մոնիտորինգի գործիքներ/ մեթոդներ	Բնապահպանական գործողությունների ցուցանիշ	Պատասխան ատուներ	Մոնիտորինգի հաճախականությ ուն
Շ Ի Ն Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ Ա Ն Փ ՈՒ Լ						
1. Հանրային լուսններ և կապը հանրության հետ	- Հանրության տեղեկաց- վածությունը շինարա- րության փուլերի վերաբերյալ - Ազդակի կողմերի տեղե- կացվածությունն ԲԱՄ-ի վերաբերյալ	շին. հրապարակ	- փաստաթղթերի ստուգումներ, - տուգայցեր շին տեղամասեր, - հանրային լուսններ, - բողոքների գրանցամատյանի ստուգումներ	Բողոքներին արձագանքման մեխանիզմն իրականացվել է բոլոր պահանջներին համապատասխան	«ՕՆ Դիզայն» ՍՊԸ, Կապալառու	Հանրային լուսնները՝ շին աշխատանքները սկսելուց առաջ, ԲԱՄ-ը
2. Շրջակա միջա- վայրի պահպա- նություն	- փոշու և այլ օդի աղտոտիչների արտանետումներ, - աղմուկի և թրթռումների մակարդակի բարձրացում - օգտագործված մեքենա- յական յուղերով ու քսա- յուղերով հողերի հնարա- վոր աղտոտումից խու- սափելու նպատակով՝ հողերի աղտոտվածությ- յան մշտադիտարկումներ - Շահագործվող տեխնի- կայի և տրանսպորտային միջոցների պարբերական ստուգումներ՝ օրենսդրու- թյամբ սահմանված կար- գով, որի պարբերակա- նությունը կորոշվի կախ- ված կիրառվող տեխ- նիկայի և տրանսպոր- տային միջոցի տեսակից և շահագործման աշխա- տաժամանակից:	շին. հրապարակ,	- ակնադիտական ստուգումներ՝ շին. հրապարակ ստուգայցերի միջոցով, - բողոքների գրանցամատյանի գրառումների ստուգում; - ըստ անհրաժեշտության՝ փոշու, աղմու- կի, թրթռումների մակարդակների գործիքային չափում և վերլուծություն՝ բողոքների առկայության դեպքում: - ամենօրյա ակնադիտական ստուգում- ներ՝ շին. հրապարակ ստուգայցերի միջոցով, ըստ անհրաժեշտության հողերի նմուշառում և լաբորատոր հետազոտություններ - համապատասխան փաստաթղթերի ստուգումներ:	- գրանցամատյանում գրանցված բողոքների քա- նակն ու կարևորությունը, - փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակը գտնվում է ՀՀ գործող նորմերի սահմաններում - գրանցամատյանում գրան- ցումներ՝ ստուգայցերի արդ- յունքների վերաբերյալ, լաբորատոր հետազոտությ- յունների արդյունքներ՝ ըստ անհրաժեշտության: - համապատասխան փա- տաթղթերի առկայություն	«ՕՆ Դիզայն» ՍՊԸ, Կապալառու	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
3. Շին աղբի և թափոնների տեղադրման վայրեր	- շին աղբի և թափոնների տեղադրման գտնվելու վայրը և կառավարումը:	Շին աղբի և թափոնների տե- ղադրման վայրի հարևանությամբ	- փաստաթղթերի ստուգում	- Շին աղբի և թափոնների տեղադրման վայրը համապատասխանում է պետ. մարմինների կողմից	«ՕՆ Դիզայն» ՍՊԸ, Կապալառու	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան

		բնակչությանը պատճառված անհարմարություններ:		թույլատրված տարածքին, - գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը		
4. Երթևեկության և մոտեցման ուղիների կառավարումը	- երթուղիների և մոտեցման ուղիների գտնվելու վայրերը; - հարևան բնակչությանը պատճառվող անհարմարությունները և անվտանգության հարցերը, ճանապարհների և այլ կառույցներին պատճառվող վնասներ:	Ճանապարհների օգտագործում սարքավորումների և նյութերի տեղափոխության համար, շինհրապարակի մոտեցման մուտքերը	- փաստաթղթերի ստուգում, - շինհրապարակ կատարած ստուգայցեր	- երթևեկության և մոտեցման ուղիների համապատասխանությունը, - գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը	«ՕՆ Դիզայն» ՍՊԸ, Կապալառու	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
5. Թափոնների և շին. նյութերի կառավարում	- Շինարարական թափոնների և նյութերի կառավարումը շինարարության ընթացքում	շին. հրապարակ	- փաստաթղթերի ստուգում, - շինհրապարակ, թափոնավայրեր կատարած ստուգայցեր	- շին աղբը, կենցաղային աղբը, ոչ պիտանի և ավելցուկային նյութերի քանակները կառավարվում են Պլանին և համապատասխան և տեղադրվում են միայն թույլատրված վայրում, - թափոնների գրանցամատյանը մշակված է և պատշաճ վարվում է:	«ՕՆ Դիզայն» ՍՊԸ, Կապալառու	
6. Շինհրապարակի վերականգնում, բանվորական հագուստի, անվտանգության կանոնների, սանիտարահիգիենիկ կանոնների պահպանում, կանաչապատում և տարածքի բարե-	- շինհրապարակը մաքրված է, նյութերը և թափոնները հեռացված են, - բոլոր մակերեսները, այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են, - շինհրապարակի տարածքը բարեկարգված է:	Տեղամասեր կատարած ստուգայցեր	- Աշխատողների սանիտարահիգիենիկ պայմանները համապատասխանում են ՀՀ առողջապահության նախարարի 2012 թ. սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջներին: - Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանման ուղղված մոնիթորինգն իրականացված է համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրություն պահանջների: - Շինհրապարակի վերականգնման և	- Պահպանված են շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնները, - ամբողջ շին աղբը, նյութերի փաթեթները և սարքավորումները հեռացված են շինհրապարակից,	«ՕՆ Դիզայն» ՍՊԸ, Կապալառու	

կարգում			բարեկարգման պլանն առկա է: - Բոլոր մակերեսներն՝ այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են մինչև սկզբնական վիճակը:			
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ (ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ) ՓՈՒԼ						
7. Թերությունների վերացման աշխատանքներ	- Աղմուկի, օդի աղտոտիչների և այլ բնապահպանական ազդեցություններ	Նախատեսվող գործունեության տարածքի սահմաններում	Բողոքներ զգայուն ընկալիչների կողմից	Բողոքների դեպքում՝ աղմուկի և թրթռուժների, օդի որակի չափագրումներ ստուգելու համար համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին:	«ՕՆ Դիզայն» ՍՊԸ, Կապալառու	
8. Տարածքի բարեկարգում	Թփերի և այլ բուսականության նորմալ աճ	Բարեկարգման բոլոր տեղամասերը	Ստուգայցեր	Թփերի և խոտածածկույթի սանիտարական վիճակի ստուգումներ	«ՕՆ Դիզայն» ՍՊԸ, Կապալառու	

ՀԱՎԵԼՎԱԾ 11. ԲՈՂՈՔԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎ

Դիմումը ներկայացնելու ամիս/ ամսաթիվը	Դիմողի անուն/ ազգանունը	Դիմողի կարգավիճակը (բնակիչ, ձեռնարկատեր, այլ)	Բողոքի/առաջարկի բովանդակությունը	Դիմողի ստորագրությունը	Դիմումի կարգավիճակը (լուծված/ ընթացքում/ փոխանցված Պատվիրատուին/ չլուծված)

ՀԱՎԵԼՎԱԾ 12. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Չարքայի, 3-րդ փողոց 31/13 հասցեում Արթուր Արրահամյի անվան մանկապատանեկան մարզահամալիրի կառուցման վերաբերյալ

(1-ին հանրային քննարկում)

Ք. Երևան

18.10.2024թ.

2024թ. հոկտեմբերի 18-ին ժամը 11:00-ին Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի շենքում (հասցե՝ Ք. Երևան 0026, Գարեգին Նժդեհի փող., 26 շենք) տեղի ունեցավ Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Չարքայի, 3-րդ փողոց 31/13 հասցեում Արթուր Արրահամյի անվան մանկապատանեկան մարզահամալիրի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ առաջին հանրային քննարկումը:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հանրային քննարկման վերաբերյալ հայտարարությունը հասանելի է եղել հանրության համար: Հանրային քննարկմանը մասնակցել են Շենգավիթի համայնքապետարանի աշխատակիցներ, Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության ներկայացուցիչը, նախաձեռնող և ՀՄԱԳ իրականացնող ընկերությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև համայնքի բնակիչներ:

Նախագծի ներկայացում և քննարկում

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ Զ. Հարությունյանը հանդես եկավ բացման խոսքով, ողջունեց հանդիպման մասնակիցներին և ներկայացրեց հանդիպման հիմնական նպատակը՝ նշելով, որ այսօր տեղի ունեցավ ՕՆ Դիզայն ՄՈՒԿ-ի կողմից Ներքին Չարքայի, 3-րդ փողոց 31/13 հասցեում Արթուր Արրահամյի անվան մանկապատանեկան մարզահամալիրի կառուցման վերաբերյալ առաջին հանրային քննարկումը, որի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել է հանրության ծանուցում, իսկ հանրային լսման անցկացման վերաբերյալ հայտարարությունը հասանելի է եղել նաև Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում:

Այնուհետև նախագծի մանրամասները և բնապահպանական հարցերը ներկայացնելու նպատակով նա խոսքը փոխանցեց բնապահպանության մասնագետ Քրիստինե Մանակյանին:

Ք. Սահակյանը մանրամասնեց, որ նախագիծը մշակվել է ճարտարապետահատակագծային առաջադրանքի պահանջների, ՀՀ քաղաքաշինական և նորմատիվ փաստաթղթերի և ՀՀ գործող շինարարական նորմերի համաձայն: Ք. Սահակյանի կողմից ներկայացվեցին նաև նախատեսվող գործունեության տեխնիկական ցուցանիշների և ճարտարապետական լուծումների վերաբերյալ մանրամասներ: Նա նշեց, որ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Չարքայի, 3-րդ փողոց 31/13 հասցեում նախատեսվում է կառուցել Արթուր Արրահամյի անվան մանկապատանեկան մարզահամալիրը՝ Հայաստանի Հանրապետությանը սեփականության վկայականով պատկանող 4482.13 մ² հողատարածքի սահմաններում:

Նախատեսվող գործունեության տարածքը տրանսպորտային մոտեցումներով է ապահովված Ներքին Չարքայի 3-րդ, 7-րդ և 2-րդ փողոցներից: Տարածքը նախկինում արդեն մասամբ բարեկարգվել է Արթուր Արրահամյի կողմից: Տարածքի ավելի քան 2000 մ² իրենից ներկայացնում է բարեկարգված և կանաչապատ հատված, որտեղ ներկայումս առկա են խաղահրապարակ՝ հագեցած բացօթյա մարզային սարքերով ու սարքավորումներով, մանկական խաղահրապարակ, մոտ 750մ² կանաչ գոտի, ճեմուղի: Տարածքի սահմանագծի երկայնքով տեղակայված են շուրջ 40 հատ պավլովնիա) տեսակի ծառեր, որոնք գործունեության իրականացման արդյունքում արևելքից և արևմուտքից կարող են ապահովել լիարժեք կատարում և իր սանիտարահիգիենիկ և գեղազույցական

գործառնությունները՝ միաժամանակ համապատասխանելով ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 8-ի N108-Ն որոշման 6-րդ և 7-րդ գլխի պահանջներին: Տարածքն ապահովված է նաև հողգման պատշաճ գործող համակարգով: Բարեկարգված հատվածում առկա են նաև նստարաններ, իսկ միջանկյալ ճանապարհահատվածը սարքավորված է ուղեփակոցով:

Ք. Սահակյանը նշեց, որ շուրջ 750 մ² մակերեսով կանաչապատ տարածքի առկայությունը, որը կազմում է ընդհանուր հողատարածքի ավելի քան 16%-ը, թույլ է տալիս, որ լրացուցիչ կանաչապատման աշխատանքներ չնախատեսվեն, ինչը նաև համապատասխանում է ճարտարապետահատակագծային առաջադրանքով սահմանված պահանջներին:

Մարզահամալիրի շենքը նախատեսվում է տեղակայել բարեկարգումից ազատ տարածքում, իսկ այն հատվածները, որոնց վնասումը շինարարության ժամանակ կլինի անխուսափելի, շինարարության ավարտին նորից կբարեկարգվեն:

Նա նշեց, որ մարզահամալիրի շենքի համար ընտրված է երկաթ-բետոնե մոնոլիտ ծածկերով կարկասային համակարգ՝ բաց երանգի տրավերտինի, տուֆի և բազալտի արտաքին երեսպատմամբ: Շենքը բաղկացած է լինելու 1 ստորգետնյա և 3 վերգետնյա հարկերից բաղկացած 2 մասնաշենքերից: Ստորգետնյա հարկի բարձրությունը 3.6մ է, վերգետնյա 1-ին հարկի բարձրությունը՝ 4.8մ, 2-րդ և 3-րդ հարկերն ունեն 5.40 մ բարձրություններ: Ստորգետնյա հարկում նախատեսված են ավտոկայանատեղիներ՝ 40 մեքենայի համար, որոնցից 4-ը նախատեսված է սահմանափակ շարժունակությամբ անձանց համար: Այն հանդիսանում է երկակի նշանակությամբ ավտոկայանատեղի, որն անհրաժեշտության դեպքում կարող է ծառայել որպես պարգազայն թաքստոց՝ 250-300 մարդու համար: Այս հարկում նախատեսված են 3 սանհանգույցներ, որոնցից մեկը՝ սահմանափակ կարողությամբ անձանց համար: Ստորգետնյա հարկի ապահովված է օգտփոխությամբ և վթարային լուսավորությամբ: Դեպի ստորգետնյա հարկ մուտքն ու ելքը կազմակերպված է Ն. Չարքայի 3-րդ փողոցից:

Առաջին մասնաշենքի առաջին տեղակայված են լինելու ընդհանուր մարզման մարզասրահներ՝ իրենց հանդերձարաններով, նախատեսված կանանց և տղամարդկանց համար: Մարզասրահների թողունակությունը կազմում է համապատասխանաբար կանացի 20 մարդ/ժամ և տղամարդկանց 20 մարդ/ժամ: Այս մասնաշենքում են լինելու նաև ադմինիստրատիվ սենյակներ, բժշկի կաբինետն իր սպասարանով, ընդհանուր օգտագործման սանհանգույցներ, սպասարան՝ արտահագուստի հանդերձարանով: Երկրորդ հարկում տեղակայված են լինելու ադմինիստրատիվ գրասենյակներ, ինչպես նաև ըմբշամարտի մարզասրահը՝ 40մարդ/ժամ թողունակությամբ, կանացի և տղամարդկանց հանդերձարաններով, մեքսման սրահներով և շոգեբաղնիքով: Երրորդ հարկում նա առկա են ադմինիստրատիվ գրասենյակներ, ինչպես նաև այստեղ է տեղակայված բոքսի մարզասրահը՝ 20 մարդ/ժամ թողունակությամբ, կանացի և տղամարդկանց հանդերձարաններով, մեքսման սրահներով և շոգեբաղնիքով:

Երկրորդ մասնաշենքում տեղակայված է լինելու բասկետբոլի դահլիճը՝ 174 նստատեղով: Բասկետբոլի սպասարանի վերևում նախատեսված է անտրեստային հարկ՝ երդիկային լույսերով, որտեղ տեղակայված է բուֆետ- սրճարանը: Վերջինս կարող է ծառայել մարզիկների համար՝ որպես ճաշարան, իսկ հանդիսատեսի համար՝ որպես սրճարան, հնարավորություն տալով վերինց դիտելու բասկետբոլային խաղերը:

Մարզահամալիրն ապահովված է լինելու թեքահարթակներով, հրդեհային ազդարարման ավտոմատ համակարգերով, էվակուացիոն ուղիներով և ելքերով և այլն: Մարզահամալիրի ենթակառուցվածքային և ենթակառուցվածքային առկայությունը լուծումների հետ կապված նախատեսում են համալիր միջոցառումներ երեսպատման համակարգի, բարձր էներգաարդյունավետությամբ պատճենների և վիտրամների տեղադրման, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացման ուղղությամբ:

Նախատեսվող մարզահամալիրի շենքը մոտակա բնակելի շինություններից գտնվում է նվազագույնը 11.7 մ հեռավորության վրա, որն իրենից ներկայացնում է 2 հարկանի քարե բնակելի տուն:

Այնուհետև Ք. Սահակյանը անդրադարձավ նախագծի շրջանակներում իրականացրած բնապահպանական և սոցիալական հնարավոր ազդեցությունների ուղղությամբ իրականացված ուսումնասիրություններին: Նա նշեց, որ բացահայտվել են ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվող դրական և բացասական ազդեցությունները և առաջարկվել դրանց ուղղությամբ անհրաժեշտ մեղմացնող միջոցառումները: Նա ներկայացրեց բնապահպանական կառավարման պլանում ամփոփված բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, ինչպես նաև դրանց մեղմացման ուղղությամբ առաջարկվող միջոցառումները: Նա նշեց, որ բնապահպանական կառավարման պլանը լինելու է շինարարության կապալառուի պայմանագրի մի մաս, որում ամփոփված միջոցառումների կատարումը Կապալառուի համար լինելու են պարտադիր:

Ք. Սահակյանը նշեց, որ ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվող աշխատանքները չեն թողնի բացասական ազդեցություն տարածքի շրջակա միջավայրի վրա, քանի որ գործունեությունն իրականացվելու է քաղաքային ակտիվ միջավայրում, որն արդեն ուրբանացված տարածք է:

Ք. Սահակյանը նշեց, որ որոշակի բացասական ազդեցություններ կանխատեսվում են շինարարության փուլում (օր.՝ փոշի, աղմուկ, շինարարական և կենցաղային աղբ), որոնք սակայն կլինեն սահմանափակ, տեղային, կունենան ժամանակավոր բնույթ և կլինեն կառավարելի: Նա հավելեց, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում ակնկալվում են դրական ազդեցություններ կապված տվյալ տարածքի հասարակական պայմանների բարելավմամբ՝ ուղղված առողջ ապրելակերպի խթանմանը և պատանիների ֆիզիկական պատրաստվածության բարձրացմանը:

Մասնակիցների կողմից հարցեր չբարձրացվեցին՝ նշելով, որ նրանք ծանոթ են նախագծային լուծումների մանրամասներին և անհամբեր սպասում են մարզահամալիրի կառուցմանը:

Հանդիպումն ամփոփեց Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչը՝ շնորհակալություն հայտնելով հանդիպման մասնակիցներին:

Մասնակիցների ցուցակը և հանրային քննարկման տեսաձայնագրությունը ներկայացվում են սույն արձանագրությանը կից:

Քննարկումների պատասխանատու
և վարող՝



Հ. Հարությունյան,
Երևանի քաղաքապետարանի
աշխատակազմի բնապահպանության
վարչության գլխավոր մասնագետ

Նախաձեռող՝



Գ. Բալիրյան,
«ՕՆ Դիզայն» ՍՊԸ, տնօրեն

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

« 18 » հոկտեմբեր, 2024

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Չարքախ 3-րդ փողոց 31/13 հասցեում Արթուր Արթուրյանի անվան մանկապատանեկան մարզահամալիրի կառուցման նախագծի վերաբերյալ

(1-ին փուլի հանրային քննարկում)

Մասնակիցների ցուցակ

Անուն, Ազգանուն	Պաշտոն	Հեռախոս	Ստորագրություն
1. Ջեյմսոնի Գրիգորյան	«ՕՆ Պրայմ» ԱԳՈՒ ԿԵՐԵԼ	098 777331	
2. Բիբուխյան Մանուկ	Բնակարանային Տնտեսության Գերատնտեսություն	091529327	
3. Հարություն Հարությունյան	Ներքին գործերի անվտանգության կոմիտեի ՆԱԽԱՐԱՐ ԿԵՐԵԼ	098989968	
4. Արսեն Արսենյան	ՊՈԼԻՍԻԱ	095854-55	
5. Արմեն Հարությունյան	Բնակարանային կոմիտեի ՆԱԽԱՐԱՐ ԿԵՐԵԼ	099-559879	
6. Արմեն Հարությունյան	Շենգավիթի ՊՈԼԻՍԻԱ Գերատնտեսություն	094-111173	
7. Գրիգոր Արսենյան	Շենգավիթի ՊՈԼԻՍԻԱ ԿԵՐԵԼ	098-1022-11	
8. Բիբուխյան Մանուկ	Բնակարանային Տնտեսության Գերատնտեսություն	094400002	
9. Նիկոլ Նիկոլայան	Շենգավիթի կոմիտեի ՆԱԽԱՐԱՐ ԿԵՐԵԼ	093376860	
10. Գրիգոր Գրիգորյան	Շենգավիթի կոմիտեի ՆԱԽԱՐԱՐ ԿԵՐԵԼ	093861505	
11. Գրիգոր Գրիգորյան	Շենգավիթի կոմիտեի ՆԱԽԱՐԱՐ ԿԵՐԵԼ	04153255	

Անուն, Ազգանուն	Պաշտոն	Հեռախոս	Ստորագրություն
12. Բիբուխյան Մանուկ	Բնակարանային Տնտեսության Գերատնտեսություն	092161557	
13. Բիբուխյան Մանուկ	Բնակարանային Տնտեսության Գերատնտեսություն	044348866	
14. Գրիգոր Գրիգորյան	Շենգավիթի կոմիտեի ՆԱԽԱՐԱՐ ԿԵՐԵԼ	044777400	
15.			
16.			
17.			
18.			
19.			
20.			
21.			
22.			
23.			
24.			
25.			



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ ԲԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

19 նոյեմբերի 2024թ.

N 237-Ա

ՈՐՈՇՈՒՄ

**ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԶԱՐԲԱԽ 3-ՐԴ ՓՈՂՈՑ, Հ. 31/13
ՀԱՍՑԵՈՒՄ ՄԱՐԶԱԴԱՐՈՑ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 11-րդ, 16-րդ հոդվածները և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N1325-Ն որոշման հավելվածի 28-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Չարբախ 3-րդ փողոց հ.31/13 հասցեում մարզադպրոց կառուցելու նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

ԵՐԵՎԱՆԻ ԲԱՂԱՔԱԴՐԵՏ՝

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

2024թ. նոյեմբերի 19
Երևան